

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքների ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10185

3KCM1

11-95

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՀՆԵՐԱԳԵՑՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՒՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄՈՒՅՆՔ

ՀամԵԾ

ՌՈՒՍ. ԿՈՄ. ՅԵՐԻՏ. ՄԻՈՒԹՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Կոնսպեկտ խմբակների յեվ խորնկուսողորոցների
յերխուսարդական սեկցիաների ղեկավարների
համար

1,0

2-րդ լրաց. հրատարակությունից
Փարզմ. ՀՈՒՆԻԿ



ՀԿՄԻ
Ռ-95

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ № 103
ՍԵՐՆՎԱՆ 1924

24 SEP 2006

ՀՅԵՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԽՈՐՀՐԳԸՅԻՆ ՀՆՐԱԳԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՂՈՐ ՅԵՐԿՐՆԵՐՈՒ, ՄԻԱՅԵՒՔ.

3KCM. ԲՈՒՍ. ԿՈՍ. ՅԵՐԻՏ. ՄԻՈՒԹՅԱՆ

Ռ-95

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Կոնսպեկտ խմբակների յեվ խորհկուղալրոցների յերիտա-
սարդական սեկցիաների ղեկավարների համար

2-րդ լրաց. հրատարակությունից
Թարգմ. Հ Ո Ւ Ն Ի Կ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ— № 103

ՅԵՐԵՎԱՆ— 1924.

01 JUN 2013

10185



31091-61

ԱՌԱՋԱԲԱՆ 2-ՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ

Այս գրքի առաջին հրատարակությունը տարածվեց մի շարքավա ընթացքում: Այդ ցույց և տալիս, վոր կոնսպեկտը անհրաժեշտ և վոչ միայն խորհկուսդպրոցների կուրսանտների համար, այլ վոչ պակաս չափով նաև յերիտասարդական շարժման խմբակներին: Այդ պատճառով մենք վորոշեցինք 2-րդ հրատարակությունը լրացնել միքանի նոր նյութերով, ցույց տալ նաև այն գրականությունը, վորը հնարատե միության ամեն մի շարքային անդամին ավելի խորացնելու իր գիտությունը յերիտասարդական շարժման պատմության վերաբերմամբ:

Յերիտասարդական շարժման մասին մեր ունեցած գրականությունը չափազանց աղքատ և: Այն հիմնական նյութը, վորից մենք ոգտվել ենք այս կոնսպեկտը կազմելիս, մինչև այժմս դեռ չե հրատարակված: Առաջիկայում «Յերիտասարդ Գվարդիա» հրատարակչությունը մտադիր և լույս ընծայել մի շարք բրոշյուրներ՝ նվիրված յերիտասարդական շարժման պատմությանը: Բայց մինչև այդ բրոշյուրների հրատարակելը, յեղած նյութերի հիմնական մասը յես ոգտագործել եմ «Ռուսաստանի յերիտասարդական շարժման պատմության տեսություն» աշխատությունս համար, վոր կսկսի լույս տեսնել «Յերիտասարդ Գվարդիա» («Молодая Гвардия») հանդիսում մոտակա համարից սկսած:

Գրականությունը մենք բաժանել ենք յերկու խմբի՝ ղեկավարների և միության սոսկական անդամների համար:

9 նույնի 1923 թ.

ԼԵՂՅՈՒՐ

ԱՌԱՋԱԲԱՆ 1-ԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ

Այս կոնսպեկտը հարմարեցրած է նահիտորհկուսդպրոցների դասընթացքին: Իհարկէ, վորոշ փոփոխութիւններով նա կարող է ոգտագործվել զեկուցումների համար և յերիտասարդական շարժման պատմութեանը նվիրված Ռուսկոմյերիտմիութեան ակումբներին կից խմբակներում, սեմինարական աշխատանքների ժամանակ, ինչպես նաև միութեան բջիջներում:

Ներկա դասախոսութիւնները դասընթացքի նպատակը պետք է լինի վոչ թէ կատարված աշխատանքի փորձի ցուցադրումը, այլ բացառապէս Ռուսաստանի յերիտասարդական շարժման զարգացման ընդհանուր պատկերացումը: Իսկ դրա անհրաժեշտ նախադրյալն այն է, վոր զեկուցանողը չսահմանափակվի ֆակտերի չոր ու ցամաք թվարկումով, այլ իր զեկուցումը կառուցանի հնարավոր չափով կենդանի և գրավիչ շաղկապված պատմութեան ձևով: Ունկնդրի գլխում ամենից առաջ պետք է պահպանվեն՝ շարժման սխեման, միջանի ամենահետաքրքրական և կարևոր ֆակտեր և, վերջապէս, բոլոր մանրամասներին անձամբ ծանոթանալու ցանկութիւնը: Բացի դրանից հարկավոր է բացատրել, թէ ինչո՞ւ շարժումն ընթացավ հենց այդ և վոչ ուրիշ ճանապարհով, ինչո՞ւ Ռուսաստանում յերիտասարդական շարժումն անխուսափելիորեն պետք է ընդունեն կոմունիստական բնույթ և այլն:

Կոնսպեկտը կազմված է այնպէս, վոր կուրսանաները կարողանան կարգաւ ինքնուրույնորեն, վորոշ չափով նա պետք է ծառայի նրանց համար վորպէս ձեռնարկ:

Այն նահկումում, վորտեղ չկա յերիտ. շարժմանը փոքրիշատե ծանոթ զեկուցանող, և վորտեղ, մյուս կողմից, պատանեկան սեկցիան նահիտորհկուսդպրոցում բազմամարդ չէ,—ամենից լավն է՝ գործադրել սեմինարական պարապմունքների ձևը: Ժողովներից մեկում կուրսանտներից հինգ դասախոսութեան թվի համեմատ ընտրվում են զեկուցողներ, վորոնք արդեն ինքնուրույն կերպով մշակում են կոնսպեկտում նշված ամբողջ նյութը: Բայց այստեղ ևս, իհարկէ, նահկումը պետք է նշանակի մի ղեկավար, վորը գիտենա վոչ պակաս, քան կուրսանտների միջից ընտրված զեկուցանողները:

Պետք է աշխատել յերիտասարդական շարժման պատմութեան դասընթացքը կարգաւ միայն այն ժամանակ, յերբ կուրսանտները լրսած կլինեն հեղափոխական շարժման պատմութեան ընդհանուր դասընթացքը:

Մորհկուսդպրոցներից դուրս գտնվող խմբակների համար կոնսպեկտից ոգտվելիս պետք է մտցնել հետևյալ փոփոխութիւնները. 1) անհրաժեշտ է ավելացնել Ռուսաստանի հեղափոխական շարժման համառոտ տեսութիւնը, 2) դասընթացքն ընդլայնել յերկու անգամ (կամ ել ավելի, վորովհետև խմբակներին մասնակցողները հնարավորութիւն չունեն մշակելու անհրաժեշտ նյութը, և 3) պարապմունքների ժամանակի ¹/₂-ից ավելին անպայման հատկացնել դրույցներին և միայն մնացած մասը՝ խմբակի ղեկավարի զեկուցմանը:

Դ Ա Մ Ա Խ Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ա,

ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՇԱՐՔՄԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

**Քանվորական յերի-
տասարդութուն
յեվ չափահասներ:**

«Բանվորական յերիտասարդությունը ավելի ինքնուրույն է, քան բարձր դասակարգերի յերիտասարդությունը: Կյանքն ավելի վաղ հասակում և ավելի մեծ դաժանությամբ և մղում նրանց դեպի գոյության կռիվ, վորով և հնարագիտության ու դիմացկունության առանձին կնիք դնում յերիտասարդներից նրանց վրա, վորոնց հաջողվում է ազատվել վաղահաս խորտակումից... Վարպետների և գործատերերի հետ ունեցած ընդհարումները բանվորական յերիտասարդության մեջ զարգացնում են զարմանալի համերաշխություն: 1878 թվականի դարնանը, նոր մանաբան-Ֆարբրիկայի բանվորների գործադուլի ժամանակ ձերբակալվել և բանտարկվել էին վոստիկանատանը Ֆարբրիկայի միջանի փոքրահասակ բանվորներ: Նրանց ընկերներն անմիջապես խմբով գնացին վոստիկանատուն և պահանջեցին նրանց ազատել: Դուրս յեկավ յերեխայական յուրահատուկ ցույց: Չափահաս բանվորները վոչ մի մասնակցություն չունեցան այդ ցույցում:

Նրանք միայն հեռվից գիտում էին... Յերբ Ֆարբրիկայի ընդարձակ բակում տեղի էին ունենում գործադուլարարների մեծ ժողովները, փոքրահասակները կողակային խուզարկու խմբակի դեր էին կատարում: Նրանք զարմանալի հոտառությամբ իմանում էին թշնամու մոտենալը և այդ մասին անմիջապես հայտնում մեծերին»: (Պրիխանով. «Русский рабочий в революционном движении», հրատ. 1919 թ., յերես 16):

Բանվորական յերիտասարդությունը 14—15 տարեկան հասակից մտնում էր ս.-դ. գործարանային խմբակների մեջ և ամենաներգործոն մասնակցություն էր ցույց տալիս գործադուլներին և ցույցերին: 19—20

տարեկան յերիտասարդ բանվորը դառնում էր արդեն ղեկավար, վորին ականջ էր դնում բանվորական մասսան: Որինակ, Ոգեսսայի բանտում 1903 թվին 105 «քաղաքականներից» 30-ը 20 տարեկանից պակաս հասակ ունեյին: Յեկատերինոսլավում գործադուլի ձերբակալված 64 ղեկավարներից 28-ը քսան տարեկանից պակաս էին: Բանտը բանվորական յերիտասարդության համար յուրահատուկ մի «Սվերդլովիա» յեր (Սվերդլովի համալսարան), վորտեղ նրանք ստանում էին հեղափոխական դաստիարակություն:

ԻճՏՕՆ միՅՅԵՎ 17 ԲՎԱ-
ԿԱՆՐ մասսայական
ՕԱՐԺՈՒԸՆՆԵՐ ՅԵՅԻճ
ԾԱԳՈՒՄ:

Պատճառներն այստեղ շատ են: Նախ՝ առանձին յերիտասարդական շարժումը իմաստ է ստանում միայն իբրև մասսայական մի շարժում, վոր ընդգրկում է բանվորական յերիտասարդության լայն խավեր: Անլեզալ պայմանները հնարավորություն չեյին տալիս մասսայական շարժման աճման: Յերկրորդ՝ հեղափոխական կազմակերպությունների անլեզալությունը անհրաժեշտ էր դարձնում հեղափոխական ամբողջ շարժման կենտրոնացումը, անպատակահարմար կլինե՞ր այդ շարժման ջլատումը և պատանիների ու չափահաս բանվորների համար առանձին կազմակերպությունների ստեղծումը: Յերրորդ՝ բանվորական յերիտասարդությունը զուրկ էր այն գիտակցությունից, վոր ինքն ունի տնտեսական և դաստիարակչական իր առանձին խնդիրները: Այս գիտակցությունը կարող էր առաջանալ միայն կուլտուրական վորոշ զարգացման հետևանքով. յեվ, վերջապես, հարկավոր չէ մոռանալ, վոր մինչև 1905 թվականը չափահասների կազմակերպությունները բաղկացած էին գլխավորապես յերիտասարդությունից:

ԻճՏԵՂԻԳԵՃԳԻԱՅԻ
ՕԱՐԺՈՒՄ:

Այսպես չէր շարժումը աշակերտ և ուսանող յերիտասարդության մեջ: Աշակերտ յերիտասարդությունը, վոր ծագում էր գլխավորապես մանր և միջին բուրժուազիայի խավերից, բնականաբար ընկնում էր հե-

դափոխական կռվի մեջ միապետութեան դեմ, այսինքն ազնվական դասի կամ հողատերերի դասակարգի գերիշխանութեան դեմ: Սրան հարկավոր ե ավելացնել նաև գործանոցային այն միջնորդան ու վաստիկանական վոզին, վոր իշխում էին դպրոցական պարապմունքների մեջ ցարիզմի ժամանակ, յերբ արգելվում եր կարդալ «ազատ» գրքույկներ: Վերջին հանգամանքը ինտելիգենտ յերիտասարդութեան համեմատաբար բարձր կուլտուրական մակարդակի հետ միասին, ինչպես և այն, վոր դըպրոցը ներկայացնում եր վորոշ կազմակերպչական միջուկ, վորտեղ հող կա տվյալ դպրոցի յերիտասարդութեան միավորման համար, հասկանալի յեն դարձնում, թե ինչո՞ւ յերիտասարդական շարժումը ծնվում ե նախ և առաջ վորպես ուսանողութեան և աշակերտութեան շարժում: Հարկավոր ե հիշել նաև, վոր հեղափոխական խմբակների և կուսակցութեանների հետ աշակերտ և ուսանող յերիտասարդութեանն ավելի քիչ կապ ունենր, քան գործարանային բանվորական յերիտասարդութեանը: Այս հանգամանքը ևս մղում եր աշակերտ ուսանող յերիտասարդութեանը դեպի ուրույն յերիտասարդական կազմակերպութեանները ստեղծումը:

1884 թվականին «Народная Воля» կուսակցութեանը անհաջող փորձ արեց ստեղծելու յերիտասարդութեան հեղափոխական առաջին կազմակերպութեանը. ինչ վերաբերում ե ուսանողութեանը, նա իր հասակով և կազմակերպութեանների բնույթով մոտ ե ավելի չափաաներին, քան յերիտասարդութեանը: Հիշատակենք ուսանողութեան դերը, այսպես կոչված, ժողովրդի մեջ մտնելու ժամանակ, 1891 թվականին սովի դեմ կռվելու և 1905 թվականի հեղափոխութեան մեջ:

Հարավ-Ռուսական յերիտասարդական միութիւն:

1901 թվականին Ռուսաստանի դանազան քաղաքներում յերևան են դալիս աշակերտական յերիտասարդական կազմակերպութեաններ՝ Պիտերում, Թիֆլիսում, Ռոստո-

վում/Պ. վ., Նարկոլովում և այլն: 1902 թվականին հարավում հրավիրվեց այդ կազմակերպութեանների համագումարը, վորտեղ կազմվեց «Հարավ-Ռուսական Միջնակարգ Դըպրոցների Աշակերտական Նմբակների Կենտր. Կոմիտեն»: 1903 թ. կայացավ յերկրորդ համագումարը: Այդ ժամանակ կազմակերպութեանների մեջ մտնում էին մոտ 500 հոգի, վորոնք բաժանված էին 40 խմբակների: Այդ խմբակների գլխավոր նպատակն ինքնակրթութեանն եր. բացի դրանից խմբակը կռիվ եր մղում դպրոցական ընթերցմի դեմ. իսկ ընկերներից վոմանք մասնակցում էին ընդհանուր քաղաքական աշխատանքին (թռուցիկների և առհասարակ գաղտնի գրականութեան տպագրումն ու տարածումը) Բնորոշ ե, վոր այդ կազմակերպութեանը կրում եր զուտ սոցիալ-դեմոկրատական բնույթ, վորի մասին վկայում ե Զ-րդ համագումարի վորոշումը. «Համագումարն անհետաձգելի և անհրաժեշտ ե համարում յերիտասարդութեան մեջ պրոլետարական սոցիալիզմի սկզբունքների պրոպագանդ, վորոնց միակ ջատագովը, համագումարի կարծիքով, Ռ. Ս.-Պ. Բ. Կ.-ն ե»: Կարիք եր զգացվում նույնիսկ կռիվ մղելու եսերների դեմ, վորոնք աշխատում էին աշակերտական յերիտասարդական կազմակերպութեաններին տալ զուտ կուլտուրական և ապաքաղաքական բնույթ: Այդ մասամբ բացատրվում ե նրանով, վոր հարավում այդ ժամանակ առհասարակ ուժեղ էին միայն ս.-դ. կազմակերպութեանները: Աշակերտ յերիտասարդութեան վրա ս.-դ. ազդեցութեանը խիստ նպաստեց Ռոստովի հռչակավոր գործադուլը 1902 թվականին («Революция на Дону», № 3, 1922 թ): Բայց, մյուս կողմից, աշակերտ յերիտասարդութեանը չեր կարող չթեքվել ս.-դ. ի կողմը նաև այն պատճառով, վոր միայն վերջինս եր տալիս պարզ և հասկանալի նշանաբաններ ու հենվում բանվոր դասակարգի վրա, վորն այդ ժամանակ (1902 թվականին) դարձավ հեղափոխական ահարկու ույժ:

Մոտավորապես նույն բնույթն եր կրում շարժու-

մը աշակերտութեան մեջ Ռուսաստանի նաև մյուս քաղաքներում: Մեծագույն միություններից մենք կը- հիշատակենք «Աշակ. Յերիտասարդութեան Հյուսիսային Միությունը», վոր գոյութիւն ունեւ Պիտերում 1904 թվականին, Կազանի «Միջնակարգ Դպրոցների Աշա- կերտների Միացած Խումբը» և շարժումը հոգևոր սեմի- նարիաների աշակերտների մեջ, վորոնք կազմակերպում եյին իրենց համագումարներն ու ունեյին իրենց Կենտ- րոնական Կոմիտեն:

Եռուսակցութիւն յեկ աօակերտ. յերիտ- սարդութիւն:

«Искра»-ն մեծ ուշադրութիւն եր հատ- կացնում այս շարժման: Աշակ. յերիտ- կազմակերպութիւնները նշանակութիւն

ունեյին կուսակցութեան համար նախ՝ վորպես տեխնիկա- կան ոժտանքակիչ ույժ (թուղիկներ տարածելու մեջ և այլն), յերկրորդ՝ վորպես կուլտուրական ուժերի մատակարար (վերջիններիս կարիքը միշտ յեղել ե ահագին). նույն կազմակերպութիւններն եյին, վոր տալիս եյին բա- վականաչափ պատրաստված պրոֆեսիոնալ հեղափոխա- կաններ: Այսպես, մենք տեսնում ենք թերթում 5 մեծ հոդված Հարավ-Ռուսական Խմբակի մասին և 70՝ փոքրը ուրիշ քաղաքների աշակերտական շարժման նվիրված: Սրանցից մենք կարող ենք յեզրակացնել, վոր աշակ- յերիտասարդութեան լավագույն մասը կուլում եր բան- վոր դասակարգի հետ միասին, չնայած դպրոցում հեղա- փոխական վոգու վոչնչացման համար իշխանութեան ձեռք առած հուսահատական փորձերին: 1904—5 թ. անցավ դպրոցական դասադուլների ալիքը:

Թե վորքան մեծ եր աշակերտական շարժման նը- շանակութիւնը, կարելի յե յեզրակացնել նրանից, վոր Ռ. Ս.-Դ. Բ. Կ. 2-րդ համագումարը ընկ. Լենինի ա- ուղարկութեամբ ընդունեց հատուկ բանաձև աշակ. յե- րիտասարդութեան նկատմամբ: Առաջ ենք բերում այդ բանաձևն ամբողջովին. «Ռ. Ս.-Դ. Բ. Կ. 2-րդ համագու- մարը վողջունում ե աշակերտական յերիտասարդութեան

հեղափոխական ինքնագործունեյութեան կենդանացումը. առաջարկում ե կուսակցութեան բոլոր կազմակերպու- թիւններին ցույց տալ ամեն տեսակի աշակցութիւն «այդ յերիտասարդութեան կազմակերպվելու ձգտումնե- րին և խորհուրդ ե տալիս աշակերտական բոլոր խմբ- բակներին նախ՝ իրենց գործունեյութեան մեջ առաջին տեղը տալ իրենց անդամների ամբողջական ու հետևո- դական սոցիալիստական աշխարհայացքի մշակման, լուրջ ծանոթանալով, մի կողմից, մարքսիզմին, մյուս կողմից՝ ոռուսական նարոգնիկութեան ու Արևմտյան Յեվրոպայի ու պարտիսանիզմին, վորպես ժամանակակից մարտնչող առաջավոր ուղղութիւնների մեջ յեղած գլխավոր հո- սանքներին,— յերկրորդ՝ * ջանալ գործնական աշխա- տանքին անցնելու ժամանակ կապեր հաստատել ս.-դ. կազմակերպութիւնների հետ, ոգտվելու համար նրանց ցուցմունքներից և, ըստ հնարավորութեան, գործի սկզբը- նավորութեան ժամանակ խուսափել խոշոր սխալներից» („Партия в резолюциях и постановлениях“):

1900—1917 թ. աշակ, յերիտասարդութեան շարժման վերաբերմամբ պետք ե մատնանշել, վոր փաստորեն նա կրում եր մանր բուրժուական բնույթ՝ սահմանափակվելով մեծ մասամբ նեղ խմբակային գործունեյութեամբ: Բայց և այնպես այդ խմբակների շարքերից դուրս յեկան բազ- մաթիվականավոր հեղափոխական կոմունիստներ:

* Ընկեր Լենինի առաջարկած բանաձևի մի մասը համա- գումարի կողմից չընդունվեց: «Յերկրորդ» բառից հետո պետք ե լինի՝ «զգուշանալ յերիտասարդութեան բարեկամների այն լու- գունգներից», վորոնք հեռացնում են նրան հեղափոխական լուրջ դաստիարակութիւնից հեղափոխական կամ իդեալիստական դա- տարկ ֆրազիոլոգիայով և ֆիլիստերական տրտունջներով կտրուկ բանակուլի վնասակարութեան ու անհարկավորութեան մասին հեղափոխական ուղարկելիտն հոսանքների միջև, վորովհետև այդ կեղծ բարեկամները գործնականում տարածում են միայն անսկզբունք և թեթևամիտ վերաբերմունք դեպի հեղափոխական աշխատանքները»:

Ռանվորտկան յերի-
սասարգուրյան առա-
ջին կազմակերպու-
թյունները:

Մինչև 1917 թվականի հեղափո-
խությունը բանվորական յերիտասար-
գության միակ կազմակերպությունն-
ներն յերն՝ 1905—06 թ. հրեյական
Բունդին կից գոյություն ունեցած բանվոր պատա-
նինների կազմակերպությունը Լեհաստանում ու Ուկ-
րայնայում, այսպես կոչված «Յուգենդ-Բունդը» և
«Ապագա» (Յուկունֆտ) կազմակերպ. Լեհաստանում 1909
-14 թ.թ.: Նրանք աշակերտական կազմակերպություններից
տարբերվում էին նրանով, վոր պարապում էին գլխա-
վորապես հեղափոխական պրոպագանդով, մասնակցում
էին ընդհանուր ցույցերին և կազմակերպում իրենց ցույ-
ցերը: Ահա թե ինչ են ասում այդ մասին հիշյալ կազ-
մակերպությունների ղեկավարները.— ցարական ըեակ-
ցիայի վայրագությունների մռայլ շրջանում, յերբ
Լեհաստանի բոլոր բանվորական կազմակերպությունները
ձգմված էին, յերբ լավագույն առաջամարտիկները վոչըն-
չանում էին բանտերում և կախաղանների վրա, յերի-
տասարգությունն ստեղծում եր իր սկզբնական բջիջները,
վորոնցից կենդանացման հենց առաջին տարիներում
առաջացավ յերիտասարգական: պրոլետարական ամուր
շարժումը: Սոցիալիստական ինքնակրթության խմբակ-
ների Լեհաստանի և Լիտվայի յերիտասարգական ավեր-
ված կազմակերպությունների մնացորդների և բանվո-
րական յերիտասարգական կազմակերպության միացման
հետևանքով («Պրոլետարական սոցիալիստական յերիտա-
սարգությունը») առաջ յեկավ «Ապագան»: 1909 և
1910 թ.թ. Մայիսի մեկին, յերբ Լեհաստանում պրոլե-
տարական բոլոր կազմակերպությունները բոլորովին
ձնչված էին, մենակ «Ապագան» եր, վոր հավատով և
պայքարի ենտուղիագմով լի, կոչ-թերթիկներով տոնեց
այդ որը... «Ապագան» Ռուսաստանում յերիտասարգա-
կան առաջին կազմակերպությունն եր, վորի անդամները
մեծ մասամբ բանվորներ էին: Այս կազմակերպության
շարքերից դուրս յեկան քաղաքացիական կովի բազմա-

թիվ մարտիկներ: Այժմա ել Լեհաստանում «Ապագա»
անունով գոյություն ունին յերիտասարգական յերկու
կազմակերպություն. փոքրամասնությունը միացել ե
սոցիալ-պատրիոտներին, իսկ յերիտասարգության մյուս,
մեծ մասը՝ կոմունիստական շարժմանը (բաց նամակ
«Ս.Ք.»-ի 15-16 համարում, 1922 թ.):

«Յուգենդ-Բունդը» իսկապես մանկական մի կազ-
մակերպություն եր. Նրա մեջ մտնում էին 10—14
տարեկան դեռահասակ պատանիները: Ել առավել կա-
րևոր ե հիշատակել բանվորների յերևիաւների հերոսա-
կան կռիվը ցարիզմի և գործատերերի դեմ: «Փոքր
Բունդի» անդամները բոլոր ցույցերի առաջին շարքերում
էին գտնվում, նրանց առաջին հերթին ել սպանում
էին: Այս կազմակերպության շարքերից դուրս յեկավ
Հոկտեմբերյան հեղափոխության առաջնորդներից մեկը,
Վոլոդարսկին, վորն սպանվեց եսերների ձեռքով 1918
թվականին:

Մենք տեղեկություն ունենք նաև, վոր փետրվա-
րյան հեղափոխությունից անմիջապես առաջ Պիտերի
միքանի գործարաններում (Պուտիլովի, Լեսսների) և
Ուկրայնայում գոյություն ունեին բանվորական յերի-
տասարգական խմբակներ: Լեսսների գործարանում
ինքնուրույն կերպով կազմակերպվել ե յերիտասարգու-
թյան գործադուլ: Նույնը յեղել ե Կիևում, «1-ին Ըն-
կերություն» գործարանում: Կիևում մետաղագործների
միությանը կից յեղել ե յերիտասարգության ուժեղ
կապակցված խումբ, վորը յերիտասարգական միություն
կազմելու գործում յեղել ե «Նախաձեռնող խմբի» մի-
ջուկը: Որեսսայում 1917 թվականին յեղել են սոցիալ-
դեմոկրատական միքանի խմբակներ, վորոնք գլուխ
կանգնեցին բանվորական յերիտասարգության սոցիա-
լիստական միության:

Փետրվարյան հեղա-
փոխությունը:

Յերիտասարգական շարժումը մաս-
սայական ե դառնում փետրվարից հետո
միայն: Փետրվարյան հեղափոխությունից

հետո սկսվում է ամբողջ բանվորական յերիտասարդության մի շտեմսված առաջադիմություն (կուլտուրական և քաղաքական): Այն բոլոր պայմանները, վորոնք բանվորական յերիտասարդությանը հնարավորություն չեյին տալիս ծավալելու մասսայական շարժումը մինչև փետրվարը, այժմս չքացան: Բանվորական յերիտասարդության առաջ հեղափոխությունը կտրուկ կերպով դրեց կրթության և պայքարի խնդիրները (ինչպես քաղաքական, նույնպես և տնտեսական): Մանավանդ վոր չափահասների կազմակերպությունները, զբաղված լինելով համաքաղաքական կռվով, չկարողացան այդ ժամանակ բավարարել բանվորական յերիտասարդության կարիքները:

Ահա թե ինչու բանվորական յերիտասարդության մասսայական շարժումը ծագում է կուսակցությունից անկախ և բավական յերկար ժամանակ զարգանում միանգամայն ինքնուրույն կերպով: Բանվորական յերիտասարդությունը չունեը յերիտասարդական շարժման փորձը (Արևմուտքի) և հարկադրված եը շոշափելով պտրելու մասսայական շարժման ձևերը: Տարբեր տեղերում տարբեր կերպով եյին կառուցվում յերիտասարդական կազմակերպությունները: Բնորոշ է Պիտերի և Մոսկվայի շարժումը:

Պիտեր: Պիտերում շարժումն սկսվում է գործարաններում և ֆաբրիկաներում յերիտասարդական կուլեկտիվների ստեղծումով: 1917 թվականի մարտ և ապրիլ ամիսներին եը այդ:

Այդ կուլեկտիվների գլխավոր նպատակն եը՝ բանվորական յերիտասարդության տնտեսական շահերի պաշտպանումն ու ինքնակրթությունը: Հունիսի սկզբին արդեն Վիբորգյան քաղաքամասում միայն հաշվում եյին կուլեկտիվներում համախմբված մոտ տասը հազար յերիտասարդ բանվոր: 1917 թվականի Մայիսի 1-ի ցույցին բանվորական յերիտասարդությունը մասնակցեց առանձնացած գորասյունով, առաջադրելով իր

նշանաբանները և կազմակերպեց յերիտասարդության առաջին միտինգ Ռուսաստանում՝ Մարսյան դաշտում: Վիբորգյան մասում վոմն լիբերալ Շեցովի գլխավորությամբ հիմնվեց «Труд и Свет» անունով շրջանային կազմակերպությունը: Այնուհետև առաջացան նման կազմակերպություններ նաև ուրիշ շրջաններում: Ռենո գործարանում տեղի ունեցած շրջանների և գործարանների պատվիրակների համաքաղաքային ժողովում ստեղծվում է Պետրոգրադի պրոլետարական յերիտասարդական կազմակերպությունների Համաշրջանային Խորհուրդը: Հիշյալ ժողովը այդ կազմակերպությունն անվանեց «Труд и Свет»: Այս կազմակերպությունն առաջադրում է իը ծրագիրը, վորի հիմնական կետերն են.

1. Վորպեսզի պրոլետարական յերիտասարդությունը իը իրավունքների լուսավորված և գիտակից պաշտպանը դառնա.
2. Վորպեսզի յապագա պրոլետարիատը դառնա կըրթված բանվոր, իը գործում մասնագետ.
3. Վորպեսզի պրոլետարական յերիտասարդության մեջ զարգանա թե քաղաքական և թե տնտեսական ու իրավաբանական կազմակերպված ինքնապաշտպանության ձգտում.
4. Վորպեսզի նրա մեջ զարգանան սեփական արժանապատվության զգացմունքն ու դասակարգային գիտակցությունը, գիտակցությունը աշխատավոր դասակարգի հզորության, յերը նա կազմակերպված է հասարակականորեն, լուսավորված ու կրթված տեխնիկայես ու արհեստակցականորեն.
5. Վորպեսզի պրոլետարական յերիտասարդության մեջ զարգանան գեղեցկի ու վեհի զգացմունքներն ու ձրգտումները գեղարվեստական բնույթ կըող բավականություններին.
6. Վորպեսզի ապագա պրոլետարիատի ֆիզիկական կացությունը բարելավվի, և նրա մեջ սեր զարգանա բանական ու առողջ զվարճությունների.
7. Վորպեսզի Ռուսաստանի պրոլետարական ամբողջ յերիտասարդությունը կազմակերպվի և միանա Արևմուտքի, նոր Աշխարհի և այլ, մանավանդ սլավոնական, յերիտասարդ

պրոլետարիատին միահամուռ «աշխատանքի և լույսի» համար հանուն համաշխարհային սոցիալիզմի հաղթանակի և միահամուռ կռվի կապիտալիզմի դեմ,—


Այս նպատակներին հասնելու համար կազմակերպությունը հանձինս իր համաշխարհային խորհրդի և նրան հարած շրջանների յերիտասարդական գործադիր կոմիտեների, պրոլետարական յերիտասարդության միավորման գործը վարում է «Աշխատանք և Լույս» նշանաբանով հետևյալ ուղղություններով.—

1. Դպրոցական ուսում և լուսավորություն.
2. Պոլիտեխնիկական և արհեստա-արդյունաբերական կրթություն.
3. Ինքնապահովում և ինքնապաշտպանություն.
4. Գրական-գեղարվեստական կրթություն և գրական հրատարակչություն.
5. Նստատիկական զարգացում (գեղեցիկ և գործնական արվեստների բնագավառում):
6. Ֆիզիկական ամրապնդում և գիտական-սպորտային զվարճություններ.
7. Տնակարգավորում, տնային տնտեսություն և գյուղատնտեսություն.
8. Բժշկա—սանիտարական պարամունքներ.
9. Ֆինանսներ և կոոպերացիա.
10. Վոչ գործարանային պրոլետարիատի կազմակերպում.
11. Միացում հողագործ (գյուղացիական) յերիտասարդության հետ.
12. Կազմակերպության գործերի ղեկավարություն և այլն: (Քաղվածք «Труд и Свет» կազմակերպության ծրագրից):

Մի փոքր անց «Труд и Свет»-ի ներսը պայքար սկսվեց հեղափոխական բանվոր յերիտասարդության և Շեցովի ու իր կողմնակիցների միջև: Յերկու շրջան (Նարվայի և Նևայի) անջատվեցին: Անջատման անմիջական շարժառիթը գուտ քաղաքական եր: Հունիս ամսին սկսվեցին հիմնադիր ժողովի ընտրական որենքը մշակող կոմիտեյի նիստերը. հարց ծագեց, թե ինչ հասակի պետք է լինեն ընտրողները. մեծամասնականները առաջարկեցին 18 տարեկան հասակը. փոքրամասնականները՝ 20, ևսկ կանգնեցին 23: Ընդունվեց փոք-

րամասնականների առաջարկը: Հունիսի 22-ին հրավիրվում է բանվորական յերիտասարդության ժողովը, վոր բողոքում է 18—20 տ. բանվոր յերիտասարդներին ընտրական իրավունքից զրկելու դեմ և ընտրում է կազմակերպչական բյուրո բանվորական յերիտասարդության սոցիալիստական միություն հիմնելու համար: Բյուրոյի անդամներ ընտրվեցին ընկ. ընկ. Լեսկե, Ռիվկին և Պիլայեվ—բոլորն ել կուսակցության անդամներ, Հուլիսի 1-ին «Մոդերն» կրկեսում տեղի ունեցած միտինգում, վորտեղ մինչև 2000 յերիտասարդ կար, առաջին անգամ ազդարարվում է բանվորական յերիտասարդության կազմակերպման զուտ դասակարգային շիտակ ծրագիրը՝ կռիվ հանուն սոցիալիզմի և սոցիալիստական հասարակության համար մարտնչողների դաստիարակություն: Մեկուկես ամսից հետո, ոգոստոսի 18|31-ին հրավիրվում է Պետրոգրադի բանվոր յերիտասարդության համաքաղաքային համագումար (ընտրությունները կատարվում էին ըստ գործարանների և ֆաբրիկաների): Համագումարին մասնակցում էին 16,000 հոգուց ընտրված 170 պատվիրակ: Վոլջույններ ուղարկվեցին Լենինին և Տրոյսկու (առաջինը թագնված եր, իսկ յերկրորդը գանվում եր բանտում): Համագումարը ցրեց «Труд и Свет»-ը և հիմնեց «Պետրոգրադի Բանվոր Յերիտասարդության Սոցիալիստական Միությունը»: Պետք է շեշտել, վոր «Труд и Свет»-ի ամբողջ կազմակերպությունը ներկա յեր համագումարում և ինքըվորոշեց իրեն արձակել: «Պետրոգրադի Բանվոր Յերիտասարդության Սոցիալիստական Միությունը» առաջին իսկ որերից մասնակցություն ցույց տվեց համաքաղաքական շարժման մեջ, Հոկտեմբերյան հեղափոխությունը, Կալեդինի և Դուտովի դեմ մղած կռվում: 1918 թվականի փետրվարին կազմակերպությունն ամբողջովին կենտրոնական կոմիտեյի գլխավորությամբ ուղղադաս կատ դուրս յեկավ գերմանական առաջխաղացման դեմ: Այդ հանգամանքը բայրալեց միությունը, վոր 1918 թ.

31091-61



կիսին հարկ յեղավ նորից կառուցանելու: Այդ ժամանակ բոլոր շրջաններում կազմակերպվում են ակումբներ, գրագիտության դպրոցներ, անցնում են զինվորական վարժություններ: Ամբողջ 1918 և 19 թ. թ. ընթացքում գորակոչը չի ընդհատվում: 1917 թվականի նոյեմբերին հրատարակվում է «Յերիտասարդ պրոլետար»-ի 1-ին համարը: Պիտերի կոմիտեն կապ է հաստատում Ռուսաստանի մյուս կազմակերպությունների հետ և Մոսկվայի հետ միասին նախապատրաստական աշխատանք է կատարում համառուսական համագումարի համար:

Մտավորապես նույն բնույթն էր կրում շարժումը Ուրալում և մի շարք ուրիշ քաղաքներում: Այլ կերպ է կառուցվել Մոսկվայի կազմակերպությունը:

Գարձուր Մոսկվայում:

Մոսկվայում յերիտասարդական Միությունը ստեղծվեց 1917 թվականի հունիսին, անմիջապես կուսակցության Մոսկվայի կոմիտեյին կից: Այդ միությունն առաջ յեկավ աշակերտ յերիտասարդության և սոցիալիստական խմբակի նախաձեռնությամբ, ինչպես և կուսակցության առանձին անդամների աջակցությամբ:

Միության մեջ կարող եյին մտնել միայն կուսակցության անդամներն ու համակրողները: Առաջին հիմնադիր ժողովում (հունիսի 11—24-ին) ներկա եյին ընդամենը 30-40 հոգի: Բայց շուտով անդամների թիվը հասավ 200-ի: Միությունն ուներ միայն մեկ գործարանային բլիշ 60 հոգուց բաղկացած՝ ռզմ-արդյունաբերական գործարանում: Միության ամբողջ աշխատանքը կայանում էր կուսակցական հանձնարարություններ կատարելու և ինքնակրթության մեջ. «մենք այն ժամանակ կատարում եյինք ամենաբազմապիսի հանձնարարություններ ու խնդիրներ, կազմակերպում եյինք կուսակցական գրականության վաճառում՝ ամեն տեսակի ժողովներում քաղաքի բոլոր ծայրամասերում մասնակցում եյինք փողոցային ագիտացիային—նախընտրական, ընտրական և ամեն տեսակի (վորի համար

յերբեմն մենք ծեծի եյինք յենթարկվում), մասնակցում եյինք կուսակցական ցույցերի կազմակերպության և այլն»: (Լ. Շաղկին. — «У истоков движения», Ю. К., № 10—12, 1922):

1917 թվականի հոկտեմբերին Անդրմոսկվագետյան շրջանում կազմակերպվեց բանվոր յերիտասարդության «Յ-րդ Ինտերնացիոնալ» միությունը: Նա բոլոր խոշոր ձեռնարկությունների մեջ ուներ բլիշներ, կազմակերպիչների առելով անդամների թիվը հասնում էր 1000-ի: Վերոհիշյալ այդ յերկու միությունների ձուլման մասին յեղած բանակցություններից հետո մյուս շրջաններում ևս սկսեցին կազմակերպվել յերիտասարդական «Յ-րդ Ինտերնացիոնալ»-ի միությունները, և վերջապես 1917 թվականի հոկտեմբերի 3-ին իր առաջին համագումարում վերջնականապես կառուցվեց Մոսկվայի «Յ-րդ Ինտերնացիոնալ» բանվոր յերիտասարդության միությունը: Այդ ժամանակ նա ուներ 2000 անդամից ավելի: Հոկտեմբերի 13-ին լույս տեսավ «Интернационал Молодежи» հանդիսի առաջին համարը: Հոկտեմբերի 15-ին տեղի ունեցավ մոսկվայի յերիտասարդության առաջին ցույցը և Ռուսաստանում բանվոր յերիտասարդության առաջին ցույցը միջազգային յերիտասարդության որվա առթիվ, վորին մասնակցում եյին 5000 հոգուց ավելի: Մոսկվայում հոկտեմբերյան կոիլների ժամանակ, վոր տեղեցին մի ամբողջ շաբաթ, միություն անդամները գտնվում եյին իրանց շրջանների Կարմիր գվարդիայի շարքերում... Հոկտեմբերյան հաղթանակից հետո յերկար չտեկեց միության «խաղաղ» աշխատանքը: Ընկերների մի մասն իսկույն մեկնեց Դոնի շրջանը և Ուկրայնա: Իսկ այնուհետև սկսվեցին գերմանական առաջխաղացումը և Բրեստի եպոպեան: Այդ ամենն, անկասկած, ինչպես և Պիտերում, քայքայեցին միությունը, վոր հարկ յեղավ կառուցել գարնանը:

Գավառներում յերիտասարդական բոլոր կազմակերպությունները հիմնվում եյին Պիտերի և Մոսկվայի

կազմակերպութիւնների ազդեցութեամբ և նմանութեամբ:

Շարժումը Գյուղական յերիտասարդութեան մեջ բարգա-
ցուցումը: Վաճուճ էյին այսպես կոչված «КУЛЬТУРКА»-ները,
վորոնք տարերային կերպով առաջացել էյին ռազմա-
ճակատից վերադարձածներէ, յերբեմն ել տեղական
ինտելիգենցիայի ազդեցութեան տակ:

Մինչև հոկտեմբեր հիշյալ խմբակները դեռևս ձե-
վավորված չէյին և ընդգրկում էյին միայն գյուղական
յերիտասարդութեան բարձր խավը՝ ամենաբարեկեցիկ
գյուղացիներէ զավակներին:

Հոկտեմբերը յեվ յերիտասարդու-
թյունը: Հոկտեմբերյան հեղափոխութիւնը արմա-
տապես փոխեց յերիտասարդական կազմակեր-
պութիւններէ և խմբակներէ աշխատանքներէ

բովանդակութիւնը: Մինչ այդ բանվոր յերիտասարդու-
թեան առաջ դրված էր մի կարևոր խնդիր—վոչնչացնել
բուրժուական տիրապետութիւնը: Բանվոր յերիտասար-
դութիւնը ներգործ ոնմասնակցութիւն ցույց տվեց բան-
վորական բոլոր ցույցերին և հեղափոխութեանը: Այս-
պես Վ. Ի. Լենինը 1917 թ. հոկտեմբերի սկզբին կուսակ-
ցութեան Կ. Կ.-ին ուղարկած նամակում (վորտեղ նա
տալիս է դիրեկտիվներ, թե ինչպես պետք է կազմա-
կերպել ապստամբութեան տեխնիկան) գրում է. «Ա-
ռանձնացնելով մեր «հարվածայիններէ» ամենավճռակաւ
տարրերը և բանվոր յերիտասարդութիւնը (ընդգծում-
ներն Իլլիչինն են), ինչպես և լավագույն նավաստիներ-
ին, կազմել նրանցից փոքրիկ ջոկատներ, վորոնք
պետք է գրավեն բոլոր կարևորագույն կետերը և
մասնակցեն ամենուրեք բոլոր կարևորագույն ուղիւցի-
աներին»: Բանվոր յերիտասարդութիւնը արդարացից
Իլլիչի կոչը: Հոկտեմբերից հետո բանվոր յերիտասար-
դութեան առաջ դրվեցին նոր խնդիրներ. բարեկադային
կովի, հակամիլիտարիստական պրոպագանդայի և գոր-
բի քայքայման փոխարեն կովի պրոլետարիատի դիկ-

տատուրայի պահպանութեան համար և նոր գորքի կազ-
մակերպում: Գործադուլներէ և տնտեսական կովի այլ
ձևերի փոխարեն,—իշխանութեան ու վարչութեան կազ-
մակերպման խնդիրը:

Հոկտեմբերից հետո գյուղացիական յերիտասար-
դութեան մեջ սկսվում է շերտավորում: Գյուղերում
կազմակերպվում են գյուղացի աղքատների խավերը
բուրժուացիների դեմ կովելու համար: Այդ կովի նեցուկն
էյին աղքատ յերիտասարդութիւնը, իսկ ամենից ա-
ռաջ ռազմաճակատից վերադարձածները: Խմբակներն
սկսում են ձևավորվել, ավելի ու ավելի ստանալով
«բոլշևիկական» գունավորում:

Միւրյունը յեվ Յերիտասարդական կազմակերպութիւն-
կուսակցութիւնը: Յերիտասարդական կազմակերպութիւն-
ները Ռուսաստանում առաջացան կուսակ-

ցութիւնից անկախ: Կոմունիստական կազմակերպու-
թիւններ դառնալու պրոցեսսն առաջ էր գնում աստիճա-
նաբար՝ կովի ընթացքում. այլ կերպ էլ չէր կարող լինել:
Բանվոր. յերիտասարդութիւնը չէր կարող միանգամից
գտնել իր կազմակերպութեան ճիշտ ձևը: Նա այդ կարող
էր ձեռք բերել միայն գործնականում: Կուսակցութիւնն
էլ զբաղված լինելով պայքարով, չէր կարող բավականա-
չափ ուշադրութիւն հատկացնել յերիտասարդութեանը:
Վերջապես կուսակցութեան հետ միշտ պահպանվում էր
վորոշ կազմակերպչական կապ, վորովհետև յերիտասար-
դական միութիւններէ դեկավարները մեծ մասամբ բու-
շևիկյան կուսակցութեան անդամներ էյին: Մյուս կողմից
կուսակցութիւնն էլ շատ լավ էր հասկանում յերիտա-
սարդական շարժման բնույթն ու նպատակները: Այդ
հաստատելու համար մենք առաջ ենք բերում VІ համա-
գումարի վորոշումներից մի քաղվածք յերիտասարդութեան
մասին.

«Համագումարն անհրաժեշտ է համարում, վոր կու-
սակցական կազմակերպութիւնները տեղերում լուրջ ուշա-
դրութիւն դարձնեն յերիտասարդութեան կազմակերպման

գործի վրա: ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹ ՉՊԵՏՔ Ե ԿՐԻ: Հաշվի առնելով փորձը Արևմտյան Յիվրոպայի, վորտեղ սոցիալիստական բանվոր յերիտասարդության ինքնուրույն կազմակերպությունները տարբերվում են պաշտոնական կուսակցությունների խնամակալության տակ գտնվող կազմակերպություններից և համարյա ամեն տեղ նեցուկ են հանդիսանում բանվորական շարժման ձախ ինտերնացիոնալիստական թևին, մեր կուսակցությունն ել պետք է Ռուսաստանում ևս ձգտի, վոր բանվոր յերիտասարդությունն ստեղծի ինքնուրույն կազմակերպություններ, վորոնք կազմակերպչորեն յենթակա չլինելով կուսակցությանը, միայն հոգևորապես կապված լինեն նրա հետ: Բայց միևնույն ժամանակ կուսակցությունը ցանկանում է, վոր այդ կազմակերպությունները հենց իրենց ծագման որից ստանան սոցիալիստական բնույթ, վոր Ռուսաստանի բանվոր յերիտասարդության Սոցիալիստական ապագա միությունը հենց իր սկզբնավորությունից հարե յերիտասարդության ինտերնացիոնալին, վոր տեղական բոլոր սեկցիաները գլխավորապես նպատակ դնեն պրոլետար յերիտասարդության դասակարգային ինքնագիտակցության զարգացումը սոցիալիզմի գաղափարների պրոպագանդայի, շովինիզմի և միլիտարիզմի դեմ մղվող յեռանդուն պայքարի ու միաժամանակ անչափահաս բանվորների և բանվորուհիների տնտեսական, քաղաքական ու իրավական շահերի պաշտպանության միջոցով:

Բանվոր յերիտասարդությունը չի գնում համաձայնականների յեսելից:

Ինչպես հոկտեմբերից առաջ, այնպես ել նրանից հետո մանր բուրժուական կուսակցությունների (եսերների, մենշևիկների) բազմաթիվ փորձերը՝ ի-

րենց յետևից տանելու բանվոր յերիտասարդությունը՝ չունեցան վոչ մի հաջողություն: Ինչո՞ւ բանվոր յերիտասարդությունը զնաց Կոմմունիստական Կուսակցության յետևից: Չծանրանալով այն հանգամանքի վրա, վոր բանվոր յերիտասարդությունը, վորպես բանվորության մի մասը, անխուսափելիորեն պետք է չափահաս բանվորների հետ միասին հրաժեշտ տար բոլոր պատրանքներին այսպես կոչված «հիմնադիր ժողովի», զե-

մոկրատիայի» և այլ նման գաղափարների վերաբերմամբ, բավական է մատնանշել այն, վոր ժամանակավոր Կառավարությունը Տ ամսվա ընթացքում վոչինչ չարեց բանվոր յերիտասարդության դրությունը բարելավելու համար: Վոչ վոք այնպես ուժեղ չեր շահագործվում բուրժուազիայի կողմից, վորպես բանվոր յերիտասարդությունը. և, հասկանալի յե, վոր նա չեր կարող գնալ այն մարդկանց յետևից, վորոնք կոչ եյին անում բուրժուազիայի հետ համաձայնելու: Փետրվարյան հեղափոխության փորձը բանվոր յերիտասարդությանը պարզ ցույց տվեց, վոր նրա առաջ դրված դաստիարակության ու տնտեսական պայքարի ինդիերները կարելի յե լուծել միմիայն պրոլետարիատի դիկտատուրայի ուրով: Այս յերևույթը առանձնապես աչքի յե ընկնում գրաված շրջաններում, Ուկրայնայում, Սիբիրում և Վրաստանում: Այսպես, որինակ՝ Ողեսոսայում 1918թ. հուլիսի կեսերին (քաղաքն սպիտակների իշխանության տակ եր) պառակտվում է բանվոր յերիտասարդության սոց. միությունը: Մենշևիկական ու եսերական տարրերը հեռանում են, բայց բանվոր ամբողջ յերիտասարդությունը հարում են որ կազմված կոմ. յերիտ. միության (վերջինս իր աշխատանքը շարունակում եր գաղտնի: Նույնը տեղի ուներ և Սիբիրում ու այլ վայրերում:

Տեղ-տեղ առաջացան նաև մենշևիկական-եսերական կամ անարխիստական յերիտ. միություններ, վորոնք բաղկացած եյին բացառապես ինտելիգենտներից, ուստի բավական է միայն հիշատակել նրանց մասին:

Նմանապես կործանվում, քայքայվում են սկառտական կազմակերպություններն ու տոլստոյական խրմբակները: Ռ. Կ ՅԵ. Մ. Ռուսաստանում հանդիսանում է բանվորա-գյուղացիական յերիտասարդության միակ մասսայական կազմակերպությունը:

Պատաստուրյուններ համագումարի համար:

Յերը յերիտասարդության շարժումն ամրապնդվեց, սոցիալոգական անհրաժեշ-

տությունն զգացվեց համառուսական միավորման: 1917—18 թ. թ. ընթացքում տեղի յեն ունենում բանվորագյուղացիական յերիտասարդական միություններին նահանգական մի շարք և շրջանային յերկու համագումարներ (Պիտերում և Ուրալում): Պիտերի և Մոսկվայի կազմակերպություններն իրենց վրա վերցրին համառուսական առաջին համագումարը հրավիրելու նախաձեռնությունը և գրա համար ընտրեցին կազմակերպչական բյուրո: 1918 թ. հոկտեմբերի 29-ին բացվում է բանվորական և գյուղացիական յերիտասարդության միություններին առաջին համագումարը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 1-ԻՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՇՈՇԱՓԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Плеханов Г. В.—Русский рабочий в революционном движении. Гиз, 1920 г.
2. Плеханов Г. В.—Собрание сочинений, т. I. Гиз, 1923 г., стр. 37 и дальше.
3. Шаповалов.—Путь молодого рабочего. Изд. „Молодая Гвардия“, 1923 г.
4. Бирик.—К широкой дороге. Гиз, 1920 г.
5. Журнал „Пролетарская революция“, № 2 (14), Гиз, 1923 г.—Статья С. Лившиц; „Казанская с.-д. организация в 1905 г.“.
6. „Пролетарская революция“, № 4, Гиз, 1922 г.—Статья Аросева; „Из прошлого революции. Казань, 1907—1909 г.“.
7. „Пролетарская революция на Дону“, сборник третий, Гиз, Ростов-на-Дону, 1922 г.—Статья Крамарова Г.; „Ноябрьская стачка и учащиеся“.
8. В. И. Ульянов (Ленин). Собрание сочинений, т. IV, Гиз, 1922 г.—Резолюция 2-го с'езда РСДРП об отношении к учащейся молодежи.
9. Ляшко Н.—Крепнущие крылья. Изд. ЦК РКСМ, 1922 г.
10. Д. Кассель.—Боевое крещение. Изд. ЦК РКСМ, 1922 г.
11. „Юный Коммунист“, орган ЦК РКСМ, № 15—16 за

- 1922 г.—Открытое письмо за подписью М. Кантор, Юзефович и др.
12. „Юный Коммунар“, орган ЦК РКСМ, № 5—6 за 1921 год.—Менис.—Забастовка мальчиков.
 13. Там-же. Скрыпник Н.—VI-й с'езд большевиков и юношеское движение.
 14. „Юный Коммунар“, № 3—4 (9—10), июль 1922 г.—Я. Менис.—Первый арест.
 15. Там-же. С. Белокриницкий.—Оценка некоторых моментов юношеского движения.
 16. „Юный Коммунар“, № 1—2 за 1922 г.—Я. Менис.—Инициативная группа.
 17. „За 5 лет“ Изд. Питерского Комитета РКСМ, 1922 г.
 18. „4 года“, сб-к МК РКСМ, Гиз, 1922 г.
 19. Е. Цейтлин.—„За 5 лет“. Изд. МК РКСМ, 1922 г.
 20. „Юный Коммунист“, № 5 за 1922 г.—Статья О. Скара; „От февраля к октябрю“.
 21. „Юный Коммунар“, № 10—12 за 1922 г.—Л. Ш.; „От союза“ „III Интернационала“ до РКСМ“.
 22. Там-же, Л. Шацкин.—У истоков движения“.
 23. „Юный Коммунист“, № 13—14 за 1922 г.—Ев. Герр; „Первые зигзаги“.
 24. Там-же—Мунни.—„Неудавшееся покушение“.
 25. „Партия в резолюциях и постановлениях“ под редакцией Каменева.—Резолюция VI с'езда Р. С.-Д. Р. П. о работе среди молодежи.
 26. „Юный Пролетарий“, орган Петроградского Комитета РКСМ. Все номера от августа 1918, 19, 20, 21, 22 годов.

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Բ.

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՈՒԿՎ. ՄԻՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

1-ին համագումարը:

Բանվորա-գյուղացիական յերիտասարդության միությունների առաջին համագումարը հիմք դրեց համառուսական կոմմունիստական յերիտասարդական շարժման: Սրանում ե կայանում համագումարի հիմնական նշանակութունը: Համագումարին յեկել էյին 22.000 կազմակերպված յերիտասարդության 120 կազմակերպություններից 175 պատվիրակ: Սրանց կեսը Ռուս. Կոմ. Կուս. անդամներ էյին, 1-ը՝ ձախ եսեր և 3 ը՝ մենչևիկ ինտերնացիոնալիստներ: Իհարկե, հիմնական հարցը միություն կազմակերպելու մասին էր: Հոկտեմբերի 31-ի ժողովում ընդունվեցին հետևյալ թեզիսները.

1. Միությունը, Ռ. Կոմ. Կուս.-ի օրինակով, նպատակ ե դնում տարածել կոմմունիզմի գաղափարը և բանվորական ու գյուղացիական յերիտասարդությունը մասնակից անել Խորհրդային Ռուսաստանի ակտիվ շինարարությանը:

2. Միությունը հանդիսանում ե յերիտասարդության անկախ կազմակերպություն:

3. Միությունը կոչվում ե «Ռուսաստանի Կոմմունիստական Յերիտասարդության Միություն»:

Առաջին կետը, յերկուսի ձեռնպահությամբ, ընդունված ե բոլորի կողմից, յերկրորդը՝ միաձայն, իսկ յերրորդը՝ 63 ձայնով ընդդեմ 6-ի և 17 ձեռնպահի: Վիճելի հարցը համագումարում վոչ թե այն էր՝ պետք ե գնալ արդյոք Կոմմունիստական Կուսակցության հետ միասին, թե վոչ, այլ միության անվան հարցը: Վո-

մանք վախենում էյին, վոր յերիտ. միության կոմմունիստական անունը կխրտնեցնի յերիտասարդության մասսաները (առանձնապես գյուղացիական): Հիմա արդեն մենք գիտենք, վոր այդ յերկյուղները չարդարացան: Բանվոր և աղքատ գյուղացիական յերիտասարդությունը գնում եր Կոմմունիստական Կուսակցության յետևից, և չի յեղել մի դեպք, վոր գոնե մեկ կազմակերպություն հավանություն չտար առաջին համագումարի վորոշումներին, մասնավորապես միության անվան վերաբերմամբ:

Յերկրորդ կետը՝ անկախության մասին կարող ե հակասություն թվալ այդ համագումարի ծրագրային վորոշման, թե Ռ. Կոմ. Յերիտ. Մ. Կենտ. Կոմ.-ը յենթարկվում ե Ռուս. Կոմ. Կուս. Կենտ. Կոմ.-ին (Բոլշ.): Սակայն այդ այդպես չե: Համագումարին հարկավոր եր ընդգծել, վոր մեր միությունը ինքնուրույն ե, ավտոնոմ, վոր միության մեջ մտնում ե անկուսակցական յերիտասարդություն, վորը սովորում ե կոմմունիզմը: Այս և միայն այս ե արտահայտված անկախ բառով:

Իր հետագա աշխատանքներում համագումարն ավելի պարզ ձևակերպեց այդ թեզիսները միության ծրագրում և կանոնադրության մեջ:

2-րդ համագումարը: Համառուսական յերկրորդ համագումարը տեղի ունեցավ քաղաքացիական կռվի ամենատաք պահուն: Այդ ժամանակ Դենիկինը մոտենում եր Տուլային, Յուդենիչը՝ Պետրոգրադին: Համագումարին մասնակցում էյին մոտավորապես 300 հոգի վճռական և 55 հոգի խորհրդակցական ձայնով: Համագումարի կենտրոնական վորոշումները զորակոչի և յերիտասարդական շարժման ձևերի մասին էյին: Համագումարից հետո տեղերում և Կենտր. Կոմիտեյում կազմվեցին զորակոչային յեռյակներ (тройка), վորոնք և առաջ տարան զորակոչի ամբողջ գործը:

Յերիտասարդական շարժման ձևերի մասին յեղած վիճաբանությունը տարվում եր այն մակարդակի վրա՝

կողմնակից պիտի լինել, թե դեմ անկուսակցական բանվ. յերիտասարդության միություն ստեղծելուն: Դեռ ևս 1918 թ. ընկ. Դունայևսկին առաջարկեց կազմել բանվ. յերիտ. խորհուրդներ՝ բանվ. և այլ պատգամավորների խորհուրդների ձևով: Նրա պատճառաբանությունը մոտավորապես այս եր՝ «բանվոր յերիտասարդությունը լինելով պրոլետարիատի մի շերտը, գտնվում էր անտագոնիզմի մեջ չափահաս պրոլետարիատի նկատմամբ»: Քանի վոր յերիտասարդությունը չունի խնամակալներ... ապա ուրեմն նա ինքը պետք է պաշտպանի իր շահերը: Յերիտասարդական միությունները չեն կարող լինել այնպիսի մասսայական կազմակերպություններ, վորովհետև նրանք միայն միություններ են, վորտեղ անդամներն արդեն ունեն վորոշ կազմակերպվածություն: Յերիտասարդական միությունները կազմակերպող և մտածող միջուկի դեր պետք է կատարեն: Իսկ բանվորական յերիտասարդությունը պետք է ըստեղծե մասսայական կազմակերպություններ՝ խորհուրդներ (Բանվ. յերիտ. խորհուրդներ հիմնելու հարցի մասին», Յե. Կ. (Ս. Կ.) № 5, Դունայևսկի): Այդ խորհուրդները հենվում են բանվորական յերիտասարդության կողմից կազմակերպված գործարաններում: Համագումարում ընկ. Դունայևսկին առաջարկում էր արդեն վոչ թե խորհուրդներ, այլ պրոֆեսսիոնալ միություններին կից սեկցիաներ, ըստ եյուլթյան հենվելով միևնույն փաստարկույթներին: Սեկցիաների յեռանդուն պաշտպանն էր նաև ընկ. Զանդերը (Լիտվայի և Բելուսսիայի Կոմյերիտ. Միության Կենտ. Կոմիտեյից). իր առաջարկությունները նա հաստատում էր Լիտվայում, Բելուսսիայում, ինչպես և Ռուսաստանի միջանի քաղաքներում գոյություն ունեցող սեկցիաների փորձերով: Դեռ Կենտր. Կոմիտեյի վերջին պլենումը (մինչև համագումարը), ուր մասնակցում էին նահանգ. կոմիտեյների ներկայացուցիչները, մերժեց պրոֆմիություններին կից սեկցիաներ ստեղծելու առաջարկը: Իսկ համագումարում այդ

առաջարկն ստացավ ընդամենը 19 ձայն (10 հոգի ձեռնպահ էյին):

«Համագումարական յերկրորդ համագումարն այդ առաջարկությունները միանգամայն մերժեց, և ինչպես գործնական փորձը ցույց տվեց, ճիշտ վորոշեց. նա գտավ անհրաժեշտ և միանգամայն հնարավոր Ռ. Կ. Յեր. Մ. դարձնել բանվ. յերիտ. մասսայական կազմակերպություն և նրա գոյության անհրաժեշտությունը ընդունել, վորպես միակ կազմակերպությունը բանվորական յերիտասարդության: Այս վորոշումը հսկայական գործնական և սկզբունքային նշանակություն ունեցավ կոմմունիստական յերիտասարդական շարժման հետագա զարգացման համար Ռուսաստանում, վոր չափով վոր նա վորոշում էր Կոմյերիտ. Միության փոխհարաբերությունը բանվորական յերիտ. լայն մասսաների հետ մի կողմից և պրոլետարական իշխանության ու պրոֆեսսիոնալ միությունների հետ մյուս կողմից, այսինքն ըստ եյուլթյան վորոշում է Ռկոմյերիտմիության դերը պրոլետարական հեղափոխության մեջ» («Ռկոմյերիտմիության պատմության զեկուցումների թեզիսները», 1921 թվի հրատարակություն):

Ինչ վերաբերում է համագումարի գործնական աշխատանքներին, նա կենտրոնացած էր միջանի հիմնական հարցերի շուրջը. աշխատանք գյուղում, տնտեսական-իրավական աշխատանք և դպրոց: Պետք է հիշել, վոր համարյա բոլոր հարցերը համագումարում զրվում էյին առաջին անգամ: Բայց յերկրորդ համագումարի ծանրության կենտրոնը վոչ թե գործնական աշխատանքի մեջ էր, այլ յերիտասարդությունը խմբելու և նրան զորակոչելու՝ Դենիկինի դեմ կռվելու համար:

Առաջին համագումարից հետո Ռկոմյերիտմիությունը կազմվեց քաղաքացիական կռվի պայմաններում մինչև 1920 թ. ոգոստոսը. դա իր կնիքը դրեց միության ամբողջ աշխատանքի վրա:

Միութեան անունը: Առաջին համագումարում (հոկտեմբեր 1918 թ.) 22000 անդամ կար, յերկրորդում՝ (հոկտեմբեր 1919 թ.) 96,000, յերրորդում՝ (հոկտեմբեր 1920 թ.) 400,000-ից ավելի: Յերկու տարվա ընթացքում անդամների թիվը ավելացած է 18 անգամ: Յեվ այս քոլորը շնորհիվ ճակատների համար կատարվող մասնաշաղկապի գորակոչների:

Կոմյերիտմիութեան կազմակերպության այս տեսակետով աճելը կարելի է բացատրել նրանով, Վոր՝ 1) քաղաքացիական կռիվը յերիտասարդութունը նետեց քաղաքական կռիվ մեջ, 2) խորհրդային կառավարութունն արդեն առաջին որերում շատ բան արավ բանվորական յերիտասարդութեան համար՝ կրճատելով բանվորական որը մինչև 6 ժամ և այլն, 3) հեղափոխութունն սկսեց ավելի ու ավելի մուտք գործել յերկրի խորքերը՝ հետամնաց քաղաքները, ծայրամասերը, գյուղը և 4) 19 թվից հետո խորհրդային Ռուսաստանի տերրիտորիան մեծանում է:

Ինչպես առաջացան նամ. յերիտասարդական կազմակերպութիւնները:

Կոմյերիտմիութեան կազմակերպութեան առաջացումը այդ ժամանակ ընթանում էր յերեք ուղղութեամբ. մեծ մասն ստեղծվեց մինչև առաջին համագումարն արդեն գոյութուն ունեցող յերիտասարդական կազմակերպութեան անմիջական ազդեցութեամբ: Տեղական կոմիտեն ուղարկում էր իր պատվիրակին, կամ, ինչպես կոչվում էր այն ժամանակ, ագիտատորին գործարան, ֆաբրիկա և գյուղ, ուր գործարանային կոմիտեի կամ գյուղական խորհրդի միջոցով ամբողջ յերիտասարդութեան ընդհանուր ժողով էր հրավիրվում: Ժողովում «ագիտատորը» կարգում և բացատրում էր միութեան ծրագիրն ու կանոնադրութունը, Վորից հետո նույն տեղում հայտարարվում էր ցուցակագրվել բջիջում: Գործարաններում, հաճախ և բջիջում, ցուցակագրվում էր ամբողջ յերիտասարդութունը:

Գյուղում բջիջների և կազմակերպութիւնների վորոշ թիվը առաջացավ տարերային կերպով՝ կամ «ճակատայինների» (ФРОНТОВИКИ) և կամ գյուղ յեկող քաղաքի բանվոր յերիտասարդութեան շնորհիվ: Հաճախ այդ կազմակերպութիւնների անդամներն իրենք պարզ գաղափար չունեին այն մասին, թե ինչ նպատակների յետամուտ միութիւնը, բայց հետզհետե կապ հաստատելով քաղաքային կազմակերպութիւնների հետ՝ գյուղական բջիջները ձևավորվեցին. անպետք տարրը ցրվեց, բջիջները կապվեցին կուսակցական բջիջների հետ և մասնակցեցին խորհրդային կառավարութեան շինարարական գործին գյուղում:

Կազմակերպութիւնների փոքր մասը, առանձնապես գավառական քաղաքներում, հիմնեցին կուսակցութեան կոմիտեները:

Հաճախ տարերային կերպով առաջացած նախաձեռնող խումբը կանչում էր իր մոտ ագիտատորին և արդեն միասին կազմակերպում էին միութիւն կամ ուղարկում ագիտատորին, Վորը գործում էր կուսակցութեան կոմիտեի միջոցով:

Կոմյերիտմիութեան յիվ ահիւտակցակոմյերիտասարդութիւններ:

Կազմակերպութիւններն իրենց առաջանալու ժամանակ հենվում էին անկուսակցական յերիտասարդութեան վրա: Յուրաքանչյուր 3-4 ամիսը մեկ անգամ հրավիրվում էին բանվ. յերիտասարդութեան համար՝ համաքաղաքային և գյուղացիների համար՝ շրջանային անկուսակցական համագումարներ: Այդ համագումարները հաճախ վորոշում էին ամբողջովին մտնել կոմյերիտմիութեան մեջ և նույնն անելու հրավիրել մնացյալ անկուսակցական յերիտասարդութիւնը: Չկա Ռուսաստանում մի անկույն, ուր յեղած չլինեն նման համագումարներ:

Միութեան ձեւավորումը:

Բացի քանակական անընդհատ աճումից արդեն առաջին տարվա ընթացքում կազմակերպութիւնները ձևավորվեցին. հրավիր-

վեցին գավառական, նահանգական և շրջանային համագումարներ, ստեղծվեցին համապատասխան կոմիտեներ, կապեր հաստատվեցին կուսակցութայն կոմիտեների հետ և այլն: Շրջանային համագումարներից մատնանշենք՝ Հյուսիսային շրջանինը 1/XII—19 թ. և Արևմտյան հոմմունայինը՝ մարտ ամսին: Յերկուսն էլ լրացրին միայն համառուսական առաջին համագումարի վորոշումները:

Կոմմունիստ առակիտ-սակաճ միությունը: 1918 թվի վերջերում Ռուսաստանի շատ քաղաքներում առաջանում էին

«կոմմունիստ աշակ. միություն» անունով կազմակերպություններ, վորոնք իրենց գոյությունը պահպանեցին մինչև 19 թվի կեսերը:

Այդ միության 15/IV—19 թ. առաջին և վերջին համառուսական համագումարին միության 8000 անդամներից յեկել էին մոտավորապես 200 պատգամավոր: Այդ համագումարում Վ. Ի. Լենինը հանդես յեկավ մի ջերմ ճառով, վորով պնդում էր, վոր միությունը անմիջապես միանա Կոմյերիտմիության հետ: Համագումարը վորոշում է ձուլվել Ռուս. Կոմ. Յերիտ. Միության հետ, վորպեսզի վոչնչացնի զուգորդությունը: Այս ձուլումը կատարվում է մայիս ամսին: Հեղափոխական աշակերտ յերիտասարդությունը չունի այնպիսի խնդիրներ, վորոնք անհրաժեշտ դարձնեյին ինքնուրույն կազմակերպությունը:

Ագիտացիա: Ագիտացիան իր բովանդակությամբ հետեւյալ նշանաբաններով էր առաջ գնում. «Խորհ. իշխանության պաշտպանություն» և «Կարմիր յերիտասարդության միացումը Ռուս. Կոմ. Յերիտ. Միության շարքերին»: Ագիտացիայի ավելի տարածված ձևերն են միտինգները, ժողովները, ցույցերն ու մամուլը:

Ագիտացիայի անմիջական նպատակն էր բարձրացնել բանվորա. գյուղացիական յերիտասարդության

վոգևորությունը: Ագիտացիայի համար պարարտ հող կար: Յերիտասարդությունը անձագանքող է: Ժողովները վորոշում են կազմակերպչական կամ ագիտացիոն բնույթ կրող հարցեր: Ռուս. Կոմ. Յերիտ. Միությունն ակտիվ մասնակցություն է ցույց տալիս համաքաղաքական բոլոր հարվածային ձեռնարկներին (կամպանիաներին)՝ «զորաձակատի շաբաթ»-ին և ուրիշներին, վորոնք 19-20 թ. թ. մի շաբաթվա մեջ գրեթե տեղի էյին ունենում յերեք անգամ: Բայց այդ ձեռնարկները համենայն դեպս ունեցան կրթական խոշոր նշանակություն:

Ջորախավա: Մեր միությունը կատարեց համառուսական յերեք մեծ զորահավաք: Առաջինը՝ 1919 թ. ապրիլին արևելյան ճակատում Կոլչակի դեմ. յերկրորդը՝ 1919 թ. աշնանը համառուսական յերկրորդ համագումարից հետո Իենիկինի դեմ և յերրորդը 20 թ. կեսերին լեհական ճակատի համար: Առաջին զորահավաքի ժամանակ Կենտր. Կոմիտեն առաջարկեց ճակատամերձ շրջանում զորակոչի յենթարկել միության անդամների 20 տոկոսը, յերկրորդ համագումարը վորոշեց զորահավաքի յենթարկել ամբողջ կազմակերպության 30 տոկոսը: Առաջադրած նպատակները կատարվում էյին 100 տոկոսից ավելի: Ճակատամերձ կազմակերպությունները գրեթե ամբողջովին զորահավաքի էյին յենթարկվում ճակատի համար: Ահավասիկ քաղվածքներ այն ժամանակվա «Правда» թերթից.

13/IV Պենզա. Աշակերտական կոմմուն. միությունը ամբողջովին մեկնեց ճակատ:

25/IV Սկոպին, Ռյազանի նահանգ. Միությունն իր լրիվ կազմով մեկնում է ճակատ:

1/V Յարիցինյան կազմակերպությունն ամբողջ կազմով մեկնեց ճակատ:

29/IV Պետերբուրգը զորահավաք է կատարում 20%⁰, այսինքն 800 հոգի:

7/V Նիժնիյ, Վիտեբսկ ուղարկում են կազմակ. 20%⁰ը:

18/V Շենկուր: 50% մեկնում է ճակատ:

19/VII Կուրսկը միության բոլոր անդամներին հայտարարեց պատերազմական դրության մեջ: Միության բոլոր անդամները 16 տար. հասակից սկսած մտնում են կռվող զորամասերը և գտնվում կուսակցական կոմիտեների տրամադրության տակ:

21/X Տվերը զորահավաքի յենթարկեց 105 հոգու:

26/X Ռյազանի նահանգ. կոմիտեն ամբողջովին զորակոչի յենթարկվեց ճակատ մեկնելու համար:

28/X Պուգաչովը զորակոչի յենթարկեց 30%:

17/XI Նովգորոդյան կազմակերպությունն ամբողջովին զորակոչի յե յենթարկված: Վյատկան զորակոչի յենթարկեց 400 հոգու:

20/XI Պիտերում 6 ժամվա ընթացքում ցուցակագրվեցին 500 յերիտասարդ և 100 աղջիկ:

Սրանք միայն պատահամբ ձեռք բերված առանձին կոորներն են: Զորակոչի յենթարկվածների թիվը հաշվում են ամենաքիչը տասնյակ հազարներ: 1919 թվի մայիսի 21-ին Ռուսկոմյերիտասարդության կենտկոմը վորոշեց ամբողջ Ռուսաստանում բոլոր անդամների համար պարտադիր զինավարժություն: Դեռ մինչև այդ ժամանակ նահանգներում Ռկոմյերիտմիության բոլոր կազմակերպություններին կից ստեղծվում են հատկապես կռվող զորախմբեր: Բացի դրանից կատարում էին մի շարք զորակոչեր հրամանատարական դասընթացների համար, վորոնք յերիտասարդական շարքերից տալիս էին հազարավոր կարմիր հրամանատարներ:

Չափազանց գործունյա մասնակցություն ցույց տվեց միությունը Կարմիր բանակի կազմակերպությանը Ուկրայնայում, 19 թվին. նրա ազատագրությունից հետո Ուկեսայի կազմակերպությունը ճակատ է ուղարկում իր անդամներից 300 հոգու հենց առաջին յերկու ամսում ընդհատակյա աշխատանքից հետո: Կիևի միությունը բանդիտական զրոհի հանդեպ համաքաղաքային կոնֆերենցիայում վորոշում է ամբողջ կոնֆերենցիայով մեկ-

նել ճակատ: 19 թվի հուլիսին այդ ամբողջ զորախումբը Տրիպոլյեյի մոտ սրի քաղվեց Զելյոնու բանդայի կողմից: Ընկածների թվումն էր յերիտասարդական գաղտնի խմբակների և «նախաձեռնող խմբի» ղեկավար Մ. Ռասմանսկին: 1920 թ. Վրանգելի հարձակումների ժամանակ խարկովցիները լրացնում են զրահապատ գնացքի անձնական կազմը, վոր և անվանվում է «Бро-непоезд КСМУ». Վրանգելի դեմ կռվելու համար Ուկրայնայի միությունը 1920 թվի աշնանը զորակոչի յենթարկեց յերկու հազար հոգու:

Հենց սկզբից միությունը մասնակցություն էր ցույց տալիս մինչ-զինվորակոչական նախապատրաստություն մտցնելու աշխատանքներին: Յուրաքանչյուր մի բաց տեղում առանձնանում էին քաղաք. ղեկավարներն ու քաղկոմները տեղական ընդհանուր զինավարժության համար: Միության բոլոր անդամները պարտավոր էին հաճախել մինչ-զինվորակոչային նախապատրաստությունը:

Վոյներիսմիությունը Այդ ժամանակաշրջանում աշխատանքը գյուղում: գյուղում խլում էր միության ուժի և յեռանդի 3/4-ը: Գյուղում կոմյերիտմիության բջիջները յերբեմն կատարում էին վարչական պարտականություններ՝ ոգնելով խորհրդային մաշմիններին հավաքել պարենտուրքը: Գյուղական բջիջները ամենաակտիվ կերպով մասնակցում էին գյուղում խորհրդային կառավարության շինարարությանը, գյուղական խորհուրդների ընտրություններին, նաև կոմմունա և խորհ. տնտեսություններ ստեղծելու աշխատանքներին: Այնտեղ, վորտեղ չկային կուսակցական բջիջներ, կոմյերիտմիությունականներն իրենց վրա էին վերցնում կուսբջիջների բոլոր պարտականությունները, իսկ վորտեղ կային կուսբջիջներ, կոմյերիտմիությունը ամենամեծ ոգնությունն էր ցույց տալիս նրանց: Այդ ժամանակաշրջանում (1918-20 թ. թ.) բավական ու-

ժեղ կապ կար քաղաքի և գյուղի միջև: Այդ կապին սպասուող էին նախ՝ հարմիր բանակը, յերկրորդ՝ «ծնողների մոտ սնվելու» գյուղ գնացող բանվորները, յերրորդ՝ քաղաքից յեկած ագիտատորները և չորրորդ՝ գյուղական յերիտասարդության անկուսակցական կոնֆերենցիաները: Գյուղական բՆիշների աշխատանքների ծանրության կենտրոնը կազմում էր, ինչպես քաղաքում (յիթե չըհաշվենք վարչական և խորհ. կառավ. կազմակերպելու աշխատանքները գյուղում), կազմակերպումը, ագիտացիան և զորահավաքը: Քաղաքի աշխատանքի տարբերությունը գյուղայինից այն էր, վոր միությունը քաղաքում կատարում էր տնտեսական աշխատանք:

Ցնեսական աշխատանք:

1917 թվից արդեն բանվոր յերիտասարդությունն սկսում է տնտեսական պայքարի փորձեր կատարել: Կատարվում է բանվոր յերիտասարդության գործադուլը Պետրոգրադի Մոսկովյան շրջանում և Վիբորգյան մասում՝ ղեկավարութեամբ «Труд и Свет» բայնական խորհրդի: 16 թվի վերջերին՝ նոյեմբեր ամսին կուսակցությունը խորհրդակցության է հրավիրում 36 գործարանների յերիտասարդ ներկայացուցիչներին և առաջադրում է բանվորական որի կրճատման, գործադրկության և այլ հարցեր: Դեկտեմբերի վերջին կոմ. կուսակցությունը ժող. լուս. կոմիտեի անունից ներկայացնում է մի ղեկուցագիր, վորով միջնորդում է՝ գործարանների միջոցներով յերիտասարդության համար բանալ գրագիտության դպրոցներ. սա բանվոր յերիտասարդության դպրոցի համար մղվող պայքարի առաջին քայլն էր:

Ցնեսական աշխատանքի ձևեր:

Տնտեսական աշխատանքները կատարելու ձևերի մասին յեղած հարցը պարզ չեր: Հարց է հարուցվում՝ պրոֆմիություններին կից սեկցիաներ և բանվոր յերիտասարդության պատգամավորական խորհուրդներ հիմնելու: Այդպիսիներ կազմակերպված են Մոսկովյում, Զամոսկվորեչյեյում, Ուբեսայում ուր նրանց գոյությունը շատ կարճատև յեղավ, վորով

հաստատվեց, վոր տնտեսական աշխատանքների միակ ուղեցույցը կարող է լինել միմիայն մեր միությունը: Իհարկե, բանվոր յերիտասարդ խորհուրդները հարցը վոչ թե տնտեսական աշխատանքի, այլ առհասարակ յերիտասարդական շարժման ձևերի մասին է: Բայց առիթը հատկապես տնտեսական աշխատանքներ վարելն էր:

Այդ աշխատանքների հասցի:

Այդ ժամանակում տնտեսական աշխատանքների շրջանում մեր կոնկրետ սնվածությունները հետևյալներն էին. — 4 — 6 ժամյա բանվորական որի սահմանում, աշխատանքի տեսչության ինստիտուտներ հիմնելը, միջանի նահանգներում դպրոցներ հիմնելը, անչափահաս բանվորների ախուրներ, վորոնցից հետագայում առաջացավ գործարանային դպրոցների մի ցանց: Պիտերում նույնիսկ հրատարակվեց մի վորոշում 14 — 18 տարեկան անչափահաս բանվորներին պարտադիր ուսում տալու մասին:

Դեպի գործարանային դպրոցներ:

Մեր միության անսխալ հայացքը դեպի բանվորական յերիտ. աշխատանքը ձևավորվում էր աստիճանաբար:

Բնորոշելու համար մեր կենտկոմի հայացքը բանվորական յերիտասարդության աշխատանքի վերաբերմամբ, մենք կըբերենք 19 թվի փետրվարի 13-ին նրա ընդունած բանաձևը: Բայց նախորդ պետք է իմանալ, վոր 17 թվի հոկտեմբերի 27-ին, Հոկտեմբերյան հեղափոխությունից 2 որ հետո ժողկոմխորհի աշխատանքի մասին կայացած վորոշման մեջ, վորտեղ սկզբից խոսվում է 8 ժամյա բանվ. որի կիրառման մասին, մի կետ կա, վոր առաջարկում է 20 թվի հունվարի 1-ից մինչև 20 տարեկան հասակ ունեցող բոլոր յերիտասարդներին ազատել աշխատանքից: Դա առաջ էր յեկել այն ցանկությունից, վոր յերիտասարդությունը տեղավորվի հատուկ պրոֆտեխնիկական դպրոցներում: Կենտկոմի բանաձևը հայտարարում է.

«Ռուսկոմյերիտմիության կենտկոմը քննելով անչա-

փահասները աշխատանքի և նրանց սոցիալիստական կրթութեան հարցը՝ կարևոր համարեց անչափահասները կրթութեան միացնել նրա արտադրողական աշխատանքի հետ՝ բարեկարգելով վերջինս սոցիալիստական կրթութեան խնդիրներին յենթարկելու ուղղութեամբ։ Սրա համար կենտր. կոմիտեն անհրաժեշտ է համարում։

1) 17 թվի հոկտեմբերի 27-ի դեկրետի այն մասը, վոր վերաբերում է մինչև 14 տ. անչափահասներին գործից հեռացնելուն, թողնել իր ուժի մեջ, իսկ մինչև 1920 թ. հունվարի 1-ը մինչ 20 տ. անչափահասներին հեռացնելու խնդիրը փոխել։

2) Անչափահասների աշխատանքի ֆիզիկական պահպանման և նրա բարենորոգման նպատակներով 14 — 18 տ. անչափահասների համար սահմանել 4 ժամյա բանվորական օր։

3) Անչափահասների ապագա դպրոցներին իբրև հիմք ընդունել ներկայիս գործարաններին կից դպրոցները, վորովհետև III աստիճանի դպրոցները իրենց ծրագրով ու կազմով միանգամայն անպետք են այդ նպատակների համար։

4) Անմիջապես օրենսդրական ճանապարհով կիրառել հետևյալ սկզբունքը — անչափահասների աշխատանքը յենթարկել սոցիալիստական կրթութեանը և մտցնել 4 ժամյա բանվորական օր արդյունաբերութեան բոլոր ճյուղերի մեջ աշխատող անչափահասների համար, վերև հիշված սկզբունքի համաձայն բարեկարգելու նպատակով։

Բացի դրանից կենտր. կոմիտեն անհրաժեշտ է համարում հերթի մեջ դնել առևտրա-արդյունաբերական ձեռնարկութուններում և պետական ու հասարակական կազմակերպութուններում աշխատող անչափահասների աշխատանքի և կրթութեան հարցը։

Հետագայում հրատարակվեցին Շացկինի թեզիսները դպրոցական քաղաքականութեան մասին, վորով դիսկուսիա սկսվեց Լուստոդկոմի հետ, և, ինչպես հայտնի յե, լիակատար հաղթանակը տարավ կոմյերիտմիութեանը։

թյունը։ Վիճաբանութունը Լուստոդկոմի հետ տևեց մինչև 21 թիվը։

Առանձնապես ծավալվեց տնտեսակ. աշխատանքը 1920 թ. կեսերին։ Այդ ժամանակ ներկայացուցչութուն է հաստատվում պրոֆմիութուններում և պետական մարմինների մեջ. բոլոր ժողովուհներն սկսում են ուղարկել շրջաբերական շրջաբերականի յետևից բանվորական յերիտասարգութեան դրութեան բարելավման մասին, ըստ վորում դրվում են ամենալայն խնդիրներ. բոլորին յենթարկել բժշկական քննութեան, ֆրասակար և վտանգավոր աշխատանքները վերացնել, անմիջապես վերացնել յերեխաների անխնամ վիճակը և սպեկուլյացիան։ Վորպես կուրյոզ կարելի յե մատնանշել ընկ. Չալկինի 1920 թ. վետր. 5-ին «Պրափդա»-յում տպած հոդվածը, ուր առաջարկվում է զորահավաքի յենթարկել 15 տարեկանից սկսած ամբողջ յերիտասարգութունը՝ գործարաններում արտադրողական աշխատանք սովորեցնելու համար։

Գաղօնի աօխտօանֆ։ Քաղաքացիական կռվի ժամանակաշրջանը վերջացնելու համար հարկավոր է կանգ առնել կոմյերիտմիութեան աշխատանքների վրա Ռուսաստանի այն շրջաններում, վորոնք գտնվում էին սպիտակների իշխանութեան տակ, այն է՝ Ուկրայնա, Կովկաս, Ուրալ և Սիբիր։

Բավական հաջող եր ընթանում գաղտնի աշխատանքը Ուկրայնայում։ 1919 թ. հուլիսի 26-ի համագումարն ու Սարկովի գրավումը միաժամանակ տեղի ունեցան։ Այդ պատճառով Դնեպրի ձախ ափն ու Դոնբասը ներկայացված չէին. համագումարն իր ուշադրութունը պիտի կենտրոնացներ Հանրապետութեան պաշտպանութեան վրա։

Դա անդրադարձել եր նույնիսկ արտաքին կողմի վրա. համագումարը զորակոչի յեր յենթարկված. նրա անդամները գիշերները հրացաններով կատարում էին

ձերբակալություններ, շուրջկալներ և այլն: Դենիկինը շարունակում էր առաջանալ: Ոգոստոսին ամբողջ Ուկրաինան արդեն գրաված էր սպիտակներով: Անտանտի ծանր տերրորը համարյա ամբողջովին խեղդեց յերիտասարդական շարժումը: Փրկվեցին և պահպանվեցին միայն բավական հին և կուռ կազմակերպությունները: Փայլուն կերպով աշխատում էր Ուրեսայի կազմակերպությունը, վորն ուներ 300 անդամ՝ տեղավորված մոտ 10 արտադրողական բջիջներում, անչափ լավ կարգավորված էր ներքին դաստիարակչական աշխատանքը. կազմակերպությունը լույս էր ընծայում «Թերթիկներ» գաղտնի հրատարակվող «կոմունիստ»-ում, ուներ կռվող խումբ, վոր ակտիվ մասնակցություն ցույց տվեց իշխանությունը գրավելու գործում, կազմակերպությունը ունեցավ 30—40 պատվիրակներից բաղկացած յերեք համագումար և գաղտնի աշխատանքների ժամանակ այնքան ամրապնդվեց, վոր ձեռնարկեց նահանգական համագումար հրավիրելու աշխատանքներին: Սոսկալի ավերման յենթարկվեց Նիկոլայևի կազմակերպությունը, ձերբակալվեց համարյա ամբողջ կոմիտեն և գեներալ Սլաշևի գնդակահարած 63 հոգու մեջ էյին նաև միություն միջանի անդամներ: Գաղտնի աշխատանքների վերջում վերակազմվեց Խերսոնի կազմակերպությունը: Լավ էր աշխատում Կրեմենչուգի կազմակերպությունը, վորի անդամներից՝ ծխախոտի գործարանի բանվորուհիներից 6 հոգի գնդակահարվեցին սպիտակների կողմից: Ակտիվ կերպով կռվում էր Յեկատերինոսլավի կազմակերպությունը:

Ինչ վերաբերում է Կովկասին, այնտեղ ամենաուժեղ կազմակերպությունը գտնվում էր Բագվում: Աչքի էյին ընկնում առանձնապես տպարանական բանվորների բջիջները: Գաղտնի կազմակերպություններ գոյություն ունեյին Թիֆլիսում (Վրաստան) և Կովկասի մյուս քաղաքներում: Ուրալում և Սիբիրում յերիտասարդական գաղտնի կազմակերպություններ գոյություն

չունեյին: Բայց ամեն տեղ յերիտասարդությունը ակտիվ մասնակցություն էր ցույց տալիս կուսակցության գաղտնի աշխատանքներին՝ կատարելով առանձին հանձնարարություններ, մասնակցում էր սպիտակների դեմ մղվող պարտիզանական հարձակումներին, Կարմիր Գվարդիայում, վորպես խուզարկու և այլն:

Գաղտնի աշխատանքների և քաղաքացիական կռիվ ժամանակաշրջանը զարկ տվավ բանվոր յերիտասարդության ինքնագիտակցությանը և բարձրացրեց գյուղի քաղաքական ու կուլտուրական մակարդակը: Անցնելով քաղաքացիական կռիվ շիտան՝ Ռուսաստանի բանվորա—գյուղացիական յերիտասարդությունը հասունացավ քաղաքականապես և ձեռք մեկնեց ավելի լուրջ ու խոր աշխատանքի—գիտությունը: Բայց քաղաքացիական կռիվը ունեցավ և իր բացասական կողմերը: Նախ՝ միությունները բավական արագ աճումը ունեցավ այն հետևանքը, վոր գոյություն ունեցող ակտիվ գործիչների խումբը չկարողացավ բավարարել կոմյերիտմիությունականների ամբողջ մասսային: Յերկրորդ՝ քաղաքացիական կռիվը յերիտասարդության միջից առաջ քաշեց վարիչներ, ագիտատորներ, բայց վոչ կազմակերպողներ և գիտակից կոմունիստներ: Յերրորդ՝ յերիտասարդությունը չկարողացավ տիրանալ գիտության, վորի պատճառով նրա մեջ առաջ յեկան թերուսներ: Բոլոր այս խնդիրներն իրենց ամբողջությամբ յերևան յեկան 1920 թ. վերջերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 2-ՐԴ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՇՈՇԱՓԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. „Первый съезд союзов рабоче-крестьянской молодежи“ (29—4 ноября). Изд. ЦК РКСМ, 1919 г.
2. „Юный Коммунист“, № 1 за 1918 г.
3. „Второй всероссийский съезд РКСМ“. Стенографический отчет. Изд. ЦК РКСМ, 1920 г.
4. „Юный Коммунист“, № 5 за 1919 г.—Статья В. Дунаевского о Советах рабочей молодежи.

5. „Юный Коммунист“, № 6 за 1919 г.—Л. Шацкин: „По поводу Советов рабочей молодежи“ (ответ Дунаевскому).
6. „Тезисы по истории РКСМ“. Изд. ЦК РКСМ, 1921 г.
7. „Спутник Юного Коммунара на 1923 г.“, изд. „Молодой рабочий“, Харьков.—Статья „Пятилетие КСМУ“ и „Триполье“.
8. „Юный Коммунист“, № 13—14 за 1922 г.—Гр. Ларский; „Пятилетие испытаний“.
9. „Юный Коммунист“, № 5—6 за 1921 год.—О. Эрдберг: Крымское подполье; продолжение в № 1—2 за 1922 г.
10. „3 года“ Кавкаский сборник, изданный в 1920 г. в Тифлисе или в Баку.
11. Вл. Дунаевский: „Памятка молодого рабочего“. Изд. ЦК РКСМ, 1920 г.
12. Вершинин: „Наша работа в деревне“. Изд. Смоленского Губ. К-та РКСМ, 1919 г.
13. Коммунистическое движение молодежи в России. Изд. ЦК РКСМ, 1919 г.
14. „Юный Коммунар“, № 3—4 за 1922 г.—И. Скрыпник: „Трипольская трагедия“; К. Виптер: „Первое пятилетие“ и весь отдел „Из прошлого борьбы“.

Դ Ա Ս Ա Խ Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Գ.

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԴԵՊՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ. ՆՈՐ
ՏՆՏԵՍ. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՌՈՒՍ.
ԿՈՄ. ՅԵՐ. Ս.

Միութեան ձգնաժամը:

20 թվի վերջին պատերազմական շրջանը վերջացավ: Միությունը մեծ դժվարութեամբ եր թեկուսում խաղաղության շրջանը, և փաստորեն այդ շարունակվեց մինչև 1922 թիվը, այսինքն 1¹/₂ տարի: Դա հիվանդագին ժամանակաշրջան եր վոչ միայն կոմյերիտմիության, այլ նաև պրոֆմիությունների և կուսակցութան համար. մի խոսքով՝ ինչպես ասում են, համաքաղաքական ճգնաժամ եր սկսված:

Պատերազմի վերջանալուց անմիջապես հետո մեր միությունն սկսեց փոքրանալ: Դոնբասի կազմակերպությունը կարճ ժամանակամիջոցում փոքրացավ յերկու անգամ: Հիմնական պատճառը կայանում են րանում, վոր յերիտասարդությունը կարիք զգաց սկսել լուրջ և կարևոր աշխատանք — նա սկսեց սովորել: Ազիտացիոն աշխատանքը սպառվեց: Տեղերում չկար գործնական աշխատանք: Գործոն յերիտասարդների փոքրաթիվ խումբը, վոր սովոր եր միայն աշխատանքի պատերազմական մեթոդներին, չկարողացավ բավարարել 400,000 կոմյերիտմիությունականներին: Մասսայից անշատվեց գործոն ընկերների մի մասը: Այս բոլորը միասին վերցրած առաջ բերին աշխատանքի անկում կամ միության ճգնաժամ, վորը և սուր բնույթ ստացավ ու տարածայնություն առաջ բերեց Կենտրոնական կոմիտեյում (ԴԵՐԱՅԵՎՅԵՆԱ):

Այդ անելանելի դրուժյունից կարող եր հանել Ռեկոմյերիտմիության համառուսական 3-րդ համագումարը:

3-րդ համագումար:

Համագումարի ընտրած հիմնական ուղղությունը ազիտացիայից պրոպագանդային անցնելն էր: Գործնականապես այս նշանակում է աշխատանքի ծանրությունը կենտրոնացնել միության անդամների քաղաքական անդրազիտության վերացման և ակտիվիստներ առաջ բերելու վրա: Համագումարում առաջին հերթին դրված էր բանվորական յերիտասարդության սոցիալիստական կրթության խնդիրը, վորի նպատակն է, վոր գործարանային աշակերտների համար հիմնվին դպրոցներ և պետական մի հատուկ մարմին անչափահաս բանվորների կրթության համար: Համագումարն ընդհանուր ուղղություն տվեց նաև այլ ճյուղի աշխատանքների նկատմամբ: Համագումարում ընկ. Լենինը տվեց միության խնդիրների փայլուն բացատրությունը, վորն իր նշանակությունը ամբողջովին պահպանում է և այժմս: (Ավելի մանրամասն՝ տես «Ильич о Молодежи»):

Միևեհի փոփոխումներ:

Ինչպես 2-րդ, այնպես էլ 3-րդ համագումարում առաջ յեկավ դիսկուսիա յերիտասարդական շարժման ձևերի մասին: Ընկ. Գարբերը (Կազան) առաջարկում էր միության շրջանակն ավելի սեղմել և մասսայական կազմակերպությունը, վոր կոմմունիստական է իր աշխատանքի ուղղությամբ ու բնույթով, դարձնել կոմմունիստական յերիտասարդության կիսակուսակցական միություն կամ ավելի ճիշտ՝ «Կոմ. Յերիտ. Կուս.»: Հասկանալի յե, համագումարը կտրականապես մերժեց այդ առաջարկությունը (ընդգեմ ձայների աննշան թվի), մատնանշելով, վոր միությունը նշանակություն ունի, վորպես բանվորագյուղացիական յերիտասարդության մասսայական կազմակերպություն: Ուկրայնայի միջանի ընկերներ առա-

ջարկեցին գործարաններում հիմնել բանվորական յերիտասարդական կոլլեկտիվներ (անկուսակցական): Այս առթիվ համագումարն ընդունեց և հատուկ բանաձև.

«Համագումարը մերժում է անկուսակց. յերիտ. կոլլեկտիվներ հիմնելը, իբրև անցողական աստիճան դեպի բլիշները և կազմակերպության հիմնական ձևն է համարում կոմյերիտմիության բլիշների գոյությունը ձեռնարկություններում, ինչպես նաև բանվ. յերիտ. պատգամավորական ժողովի անհրաժեշտությունը՝ ընդունելով, վորպես լայն մասսաների հետ կապ հաստատելու ձև անկուսակցական յերիտասարդական կոնֆերենցիան»:

3-րդ համագումարում ընդունվեց նոր ծրագիր, վորը հետագա 4-րդ համագումարում զգալի փոփոխությունների յենթարկվեց: Բացի վերոհիշյալներից, վիճելի հարցերից մեկն էր միության վերաբերմունքը պրոլետարական իշխանությանը: Մի շարք ընկերներ առաջարկում էին միության այսպես անվանված, «պետականացման» թեորիան: Բանն այն է, վոր մինչև այդ էլ միությունը փաստորեն կատարում էր պետական մի շարք ֆունկցիաներ՝ 4 և 6 ժամյա բանվորական որի կիրառումն և այլն: 1920 թվականի վերջերը պետական ապարատն ամրացավ: «Պետականացման» կողմնակիցներն անհրաժեշտ էին գտնում, վոր միությունը լրիվ կատարի պետական բոլոր այդ ֆունկցիաները: Համագումարն այդ մերժեց և պարզ կերպով սահմանագծեց միության և պետական մարմինների աշխատանքները: Չվերցնելով մեզ վրա պետական աշխատանքը՝ մենք ակտիվ մասնակցություն ցույց կտանք նրան: Նման փոխհարաբերություններ էին սահմանված նաև պրոֆմիությունների հետ:

3-ից դեպի 4-րդ համագումար:

3-րդ համագումարից հետո սկզբնական շրջանում սկսվեց միության աշխատանքների կենդանություն, բայց հետագայում այդ ընդհատվեց նոր տնտեսական քաղաքականության կիրառմամբ:

Ամբողջ կազմակերպութեան մեջ սկզբնական շրջանում տենդագին կերպով տարվում էր քաղաքական անգրագիտութեան վերացման աշխատանքը: Այդ ժամանակաշրջանի ամենամեծ գործը յեղավ համառուսական խորհրդակցութիւնը քաղլուսվարական աշխատանքների մասին (1921 թ. փետրվարի 5): Այդ խորհրդակցութեան մեջ մանրագնին կերպով նյութեր մշակվեցին անգրագիտութեան վերացման, արտադրողական պրոպագանդայի, ակմբային աշխատանքի, տպագրութեան, աշխատակիցներ պատրաստելու և պետական մարմինների հետ փոխհարաբերութիւններ վարելու համար:

Փետրվարի 15-ին սկսվեց միութեան անդամներին համառուսական վերացուցակազրութիւնը: Միութեան քանակը ծառայողների և գյուղացիների հաշվին կրճատվեց 50% -ով (մինչև 3-րդ համագումարը միութեան 400 հազար անդամների փոխարեն մոտ 200,000 անդամ՝ 1921 թ. կեսերին): Սրանից հետո ապրիլին փորձ յեղավ վորակապես ամրապնդել կազմակերպութիւնը, նվիրելով շաբաթներ գործարանային բջիջներն ամրապնդելու: Առաջին հերթին սկսվեց ամառային աշխատանքներին ընտելանալու կամպանիան:

Առանձին միջոցներ էյին ձեռք առնված միութեան անդամներին քաղաքական կյանքին մասնակից անելու:

Համառուսական 3-րդ համագումարը վորոշեց ժամանակավորապես մեկուսացնել միութիւնը, վորպեսզի նա ըստ վորակի ամրապնդե իր շարքերը: Կրոնշտատի դեպքերի ժամանակաշրջանն արդեն ցույց տվեց, վոր միութիւնն զգալիորեն կտրված է բանվոր յերիտասարդութեան մասսաներից: Մոտավորապես հունիսին-հուլիսին (1921 թ.) սկսվեցին շտատների կրճատումներ, յերիտասարդների մասսայական արձակուրդն պաշտոններից, աշխատավարձի նվազումն, բանվորական որի տևողութեան խախտումն: Այս յերևույթն առաջ բերեց վորոշ անտագոնիզմ բանվորական յերիտասարդութեան ու միութեան մեջ, անվստահութիւն դեպի միութիւնը: Սրա հետ

միասին նաև նեպ-ի ստեղծած պարագաները իրենց բացասական ազդեցութիւնն ունեցան յերիտասարդութեան վրա. բանվոր յերիտասարդութիւնը չկարողացավ միանգամից հասկանալ նոր քաղաքականութեան նշտակութիւնն ու էյութիւնը: 1921 թվի յերկրորդ կեսին և 22 թվի սկզբներին միութեան ամբողջ աշխատանքն ընթանում է հետևյալ նշանաբաններով. պայքար բանվոր յերիտասարդութիւնը արտադրութիւնների մեջ պահելու համար, միութեան կապի ուժեղացում անկուսակցական յերիտասարդութեան հետ, նեպ-ի բացատրութիւն և պայքար նրա այլասեռող ազդեցութեան դեմ:

Մինչև Ռ. Կ. Յե. Մ. համառուսական 4-րդ համագումարը շատ քիչ բան էր արված այդ բոլորն իրականացնելու համար, բացառութիւն է կազմում միայն նեպ-ի բացատրութեան խնդիրը: Սա բացատրվում է նրանով, վոր նեպ-ը աստիճանաբար էր առաջանում և յուրաքանչյուր անգամ նորանոր հարցեր էր դնում միութեան առաջ: Կարևոր է մատնանշել միայն ՊԱԽ-ի (պաշտպանութեան և աշխատանքի խորհրդի) վորոշումը, վոր կարգավորում էր շտատների կրճատումը: Դրանից բացի հենց այդ ժամանակաշրջանում հիմք դրվեց գործարանային դպրոցների կառուցման գլխավորօտեսիկրթվարում հիմնվեցին դպրոցներ անչափահաս բանվորների համար: Դպրոցների մեծ մասը հիմնվեց 1921 թվին:

4-րդ համագումար:

4-րդ համագումարին մասնակցում էյին 415 պատգամավոր վճռական և մոտ 200 խորհրդակցական ձայնով: Համագումարի հիմնական հարցերն էյին՝ բանվոր յերիտասարդութեան դրութիւնը, նրա բարելավման միջոցներն ու նոր տնտեսական քաղաքականութեան հետ կապված միութեան հերթական հարցերը:

Բանվորական յերիտասարդութեան դրութեան բարելավման համար համագումարն առաջադրեց գործնա-

կան մի շարք միջոցներ. 1) կանոնավորել անչափահաս բանվորներին արձակելու կարգը, 2) ավելացնել դպրոցների թիվը, 3) ճիշտ սահմանել անչափահասների տարիքը և այլն:

Բայց հիմնական հարցը՝ նոր ուղղութիւնը հարմարվելու մասին եր: Փորձառութիւնն չկար բոլորովին, և համագումարն ստիպված եր առաջ ընթանալ շոշափելով միայն: Միութեան հերթական խնդիրները մասին բանաձևերում ասվում ե. «բանվորական յերիտասարդութիւնը, վոր ավելի քիչ ե կապված արտադրութեան հետ, քան ամբողջ բանվոր դասակարգը, ավելի լե յենթակա մանր-բուրժուական տարերքին և ապադասակարգայնացման»: Նշանակում ե, անհրաժեշտ ե, վորպես գլխավոր խնդիր դնել «միութեան անդամների թեորետիկական մակարդակը բարձրացնելու» հարցը և միութեան ամբողջ ապարատն ու աշխատանքի մեթոդները հարմարեցնել այդ խնդրին: Համագումարի հետագա վորոշումները (գործարանային բջիջների դասընթացը, ակտիվ—կազմակերպիչ, աշխատանքը գյուղում և այլն) —այդ կետի մանրամասնութիւններն են միայն:

Համագումարում արվեցին միութեան ծրագրի եյակական լրացումները ու փոփոխումներ և մշակվեց կանոնադրութիւնը:

Համագումարում կար 3 հիմնական վիճելի հարց՝ միութեան քաղաքական դերը, տարիքի ցենզը և գոտմը: Ուկրայնայի նախկին օպպոզիցիայի մի շարք ընկերներ համագումարում վիճաբանութիւն սկսեցին միութեան քաղաքական դերի մասին: Ըստ եյութեան նրանց առաջարկութիւնը հանգում եր այն բանին, վոր մեր միութիւնը կարողանար խառնվել կուսակցական կյանքին, վոր միութիւնը կուսակցական կազմակերպութիւններին հավասար մասնակցեր վիճելի հարցերի քննութեանը: Իհարկե, այդ պահանջը մերժվեց. մեր միութիւնն, ամենից առաջ, կոմունիստական դաստիարակութեան մասսայական մի կազմակերպութիւն ե. կու-

սակցութեան հետ մեր փոխհարաբերութիւնները կայանում են նրանում, վոր 1) միութիւնը յենթարկվում ե կուսակցութեանը և 2) իր անդամներին լծում ե կուսակցական աշխատանքների, բայց այնպիսի, վորոնք կրում են դաստիարակչական բնույթ, և վորին, սակայն, չեն նպաստում կուսակցական համագումարի վիճաբանութիւնները: Մեր միութիւնը չի հանդիսանում կուսակցութեան մի մասը, մյուս բոլոր կազմակերպութիւնների հետ միատեսակ իրավունքներ ունեցող, այլ նա հանդիսանում ե մի դպրոց, վորի միջոցով կուսակցութիւնն իր շարքերն ե ընդունում յերիտասարդութեան նոր ուժեր:

Տարիքի ցենզը մինչև 16 տ. բարձրացնելու հարցը սպառնում եր միութիւնից հեռացնել բանվոր յերիտասարդութեան մի զգալի թիվ՝ բոլոր 14—16 տարեկաններին: Դրա հետ միասին նա հնարավորութիւն չէր տա միութիւնը մտնելու հենց այդ հասակի անչափահաս բանվորներին, վորոնք բավական շատ եյին գործարաններում: Մերժվեց նաև գտման մի միջոց, վորը չպետք ե կարողանար իրագործել իր առաջ դրված խնդիրները, այն ե՝ ազատել միութիւնը մանր բուրժուական տարերքից. սրա փոխարեն համագումարը հիմնական ուղադրութիւն դարձրեց գործարանային շրջանների և բջիջների վրա:

Պայտաբ դուրյան բու- 4-րդ համագումարից հետո միութիւնը իր հիմնական ուղադրութիւնը կենտրոնացրեց բանվոր յերիտասարդութեան տնտեսական դրութեան բարելավման վրա: Այստեղ պայքար եր մղվում բանվոր յերիտասարդութեան պահպանութեան համար արտադրութեան բոլոր ճյուղերում՝ գործարաններից և տնայնագործական արհեստանոցներից սկսած մինչև կոմիսարիատները: Արձակումները շարունակվում եյին: Աշխատանքի պայմանները բարդանում եյին, առանձնապես Ռ. Կոմ. Կուսի. Կենտ. Կոմի՝ պրոֆ-

միությունները աշխատանքների նոր ընթացքի մասին ունեցած թեզիսների շնորհիվ: Պրոֆմիությունները անցան կամավոր անդամության սկզբունքին, մտցվեց կոլեկտիվ համաձայնության սխեմա:

Նոր վարժագծի և արվեստի: Միության ներքին կյանքն արտահայտվում էր նոր կուրսին հարմարվելու մեջ, վոր ընթանում էր շատ դանդաղ: Առաջին հիմնական խնդիրը, վոր առաջ յեկավ, լուսավորության աշխատանքի մեթոդների մասին էր: Տեղերում նոր մեթոդներ գտնելու աշխատանքներ էյին կատարվում, կազմակերպվում էյին զիսկուսիաներ պարերի մասին, վորոշ տեղերում մասսայորեն կիրառվում էյին խաղեր, զվարճություններ:

Նոր ձևերին անցնելը և Կոմյերիտմիության կազմակերպությունների կյանքի հեղաշրջումը վերջնականապես ձևավորվեց փաստապես վոչ թե միության 4-րդ համագումարից անմիջապես հետո, այլ մի կողմից կուսակցության XI համագումարի և մյուս կողմից միության համառուսական կոնֆերենցիայի միջև յեղած ժամանակամիջոցում:

Ուկրայնական օպպոզիցիան: Պատերազմից խաղաղության անցնելու ժամանակ միության ցրվածության համար բնորոշ է աղմուկ հանած ուկրայնական զիսկուսիան: Նա ընդգրկեց կազմակերպության ամենավարի մասերը, բայց այնուամենայնիվ զուտ տեղական ուկրայնական բնույթ էր կրում:

Դիսկուսիան Ուկրայնայի սահմաններից դուրս հանելու առանձին փորձերը վորևե զգալի հաջողությամբ չպսակվեցին:

Ուկրայնական «օպպոզիցիան» առաջարկում էր՝ 1) հիմնել բանվ. յերիտասարդության անկուսակցական կոլեկտիվներ, և նույնիսկ գյուղացիական, 2) փակել ինտելլիգենցիայի մուտքը միության մեջ, 3) կոմիտեները մեքենայորեն բանվորացնել և այլն: Այս բոլորն

էլ մտնում են միության կոլեկտիվների և մասսայականության հարցի մեջ:

Մեր միությունը հանդիսանում է պրոլետարական մասսայական կազմակերպություն և հենց վորպես այդպիսին էլ իմաստ ունի նրա ինքնուրույն գոյությունը: Այդ պատճառով կարիք չկա ստեղծելու անկուսակցական բանվ. յերիտ. ոժանդակող մասսայական կազմակերպություններ: Աշակերտ յերիտասարդությունը միության մեջ ընդունվում է մեծ դժվարություններով, բայց հենց վոր աշակերտը դարձավ միության անդամ, նրա հետ պետք է վերաբերվել այնպես, ինչպես միության յուրաքանչյուր անդամի հետ:

Համառուկրայնական 3-րդ համագումարն ստեղծեց լիակատար միություն: Միության մեջ գոյություն ունեցող ամեն տեսակի ֆրակցիաները վոչնչացան: Դիսկուսիայից հետո Ուկրայնայի կազմակերպությունը չափազանց արագորեն ամրապնդվեց և դարձավ Ռուսկոմյերիտմիության ամենառաաջնակարգ կազմակերպություններից մեկը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 3-ՐԴ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՇՈՇԱՓԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Леонтьев.—«К 3-му с'езду РКСМ». Изд. ЦК РКСМ, 1920 г.
2. «Резолюции и постановления 3-го всероссийского с'езда РКСМ». Гиз, 1920 г.
3. Ленин.—«Задачи союзов молодежи». Гиз, 1921 г.
4. «Юный коммунист», № 16-17 за 1920 г.; отдел: «К 3-му С'езду».
5. «Юный коммунист», № 18 за 1920 г.—Статья Л. Шацкина: «Итоги 3-го с'езда».
6. Материалы всероссийского совещания политпросветов». Гиз, 1921 г.
7. Бюллетени IV с'езда РКСМ.
8. «Отчет ЦК РКСМ IV-му всероссийск. с'езду» Гиз, 1921 г.
9. «Итоги IV с'езда РКСМ». Гиз, 1921 г.
10. Л. Шацкин: «Классовость, массовость, интеллигенция и самодеятельность». Гиз, 1921 г.
11. «С'езд единства». Стенографический отчет 3-го всеукраинского с'езда КСМ. Изд. ЦК КСМУ, 1921 г.
12. «Решение 3-го всеукраинск. с'езда» Изд. ЦК КСМУ, 1921 г.
13. «Дискуссионный листок», орган ЦККСМУ за 1921 г.

Դ Ա Ս Ա Խ Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Դ.

Մ Ի Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը Ն Ո Ր Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր Ո Ւ Մ.
Ռ Կ Ո Մ Յ Ե Ր Ի Տ Մ Ի Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Յ Ե Վ Յ Ե Ր Ի Տ.
Կ Ո Մ Ի Ն Տ Ե Ր Ն Ա Յ Ի Ո Ն Ա Լ Ը

Ռ ս ու ս Կ ո մ Կ ու ս Ի X I
հ ա մ ա գ ու ս մ ա ռ ք :

Յ եր ի տ ա ս ա ռ դ ա կ ա ն կ ո մ մ ու ն ի ս տ ա կ ա ն մ ի ու թ յ ա ն մ ե ջ ա յ ժ մ ա ա շ խ ա տ ա ն ք ր Ն ու լ յ ն ք ա ն կ ա ր ե ու ր ե, վ ո ռ ք ա ն պ ր ը ֆ մ ի ու թ յ ու ն ն եր ի և գ ո ռ ք ի մ ե ջ (ն եր ա ծ ու թ յ ու ն) : Ա յ ժ մ ա կ ու ս ա կ ց ու թ յ ու ն ը չ ու ն ի ա վ ե լ ի կ ա ր ե ու ր խ ն դ ի ր, ք ա ն բ ա ն վ ո ռ և գ յ ու ղ ա ց ի յ եր ի տ ա ս ա ռ դ ս եր ն դ ի դ ա ս տ ի ա ռ ա կ ու թ յ ու ն ը » (Լ . Տր ո յ կ ի) : Յ եր ի տ ա ս ա ռ դ ու թ յ ա ն մ ե ջ կ ա տ ա ր վ ե լ ի ք ա շ խ ա տ ա ն ք ի վ ը ա մ ե ն ք ա վ ե լ ի պ ե տ ք ե ու շ ք դ ա ր ձ ն ե ն ք, ք ա ն յ ե ղ ե լ ե մ ի ն չ և ա յ ժ մ . մ ե ն ք պ ե տ ք ե հ ա ս կ ա ն ա ն ք, վ ո ռ ս ա վ ո չ թ ե խ ա դ ե, ա յ լ ա ն չ ա փ լ ու ը ջ մ ի գ ո ռ ծ » (Գ . Զ ի ն ո վ յ և . Ռ ու ս Կ ո մ Կ ու ս Ի X I հ ա մ ա գ ու ս մ . յ եր ի տ ա ս ա ռ դ ու թ յ ա ն մ ա ս ի ն) :

Բ ո լ ո Ր ա յ ա հ ա յ տ ա ր ա ռ ու թ յ ու ն ն եր ը հ ս կ ա յ ա կ ա ն ա գ դ ե ց ու թ յ ու ն ու ն ե ց ա ն կ ու ս ա կ ց ա կ ա ն կ ա ր ծ ի ք ի վ ը ա և ա ռ ա գ ա ց ը ի ն մ ի ու թ յ ա ն վ ո ռ ա կ ա կ ա ն ա ճ ու մ ը : Կ ու ս ա կ ց ու թ յ ա ն X I հ ա մ ա գ ու ս մ ա ռ ը յ եր ի տ ա ս ա ռ դ ու թ յ ա ն մ ա ս ի ն հ ա ն ա ծ ի ր բ ա ն ա ձ և ու մ ճ ի շ տ ց ու ց մ ու ն ք ն եր տ վ ե ց ն ա և մ ի ու թ յ ա ն ը ի ր գ ո ռ ծ ու ն ե յ ու թ յ ա ն հ ա մ ա ր և կ ու ս ա կ ց ա կ ա ն կ ա գ մ ա կ եր պ ու թ յ ու ն ն եր ի ն : Ա յ տ ե ղ ա ռ դ ե ն ն ո Ր կ ու ը ս ի ն հ ա ր մ ա ր վ ե լ ն ա ռ տ ա հ ա յ տ վ ա ծ ե վ ո չ թ ե ա ն ո Ր ո շ , ի ն չ պ ե ս մ ի ու թ յ ա ն 4-ր դ հ ա մ ա գ ու ս մ ա ռ ու մ (ու ժ ե ղ ա ց ն ե լ կ ո մ մ ու ն ի ս տ ա կ ա ն դ ա ս տ ի ա ռ ա կ ու թ յ ու ն ը), ա յ լ ա վ ե լ ի կ ո ն կ ը ե տ : Դ ա ա ու ա ն ձ ն ա պ ե ս պ ա ր դ ե ր հ ե տ և յ ա լ ձ և ա կ եր ս վ մ ա ն մ ե ջ . « կ ո մ յ եր ի տ մ ի ու թ յ ա ն ն եր ք ի ն ա մ ը ո ղ ջ

ա շ խ ա տ ա ն ք ը պ ե տ ք ե վ ո թ ի ս ե լ , և մ ե ն ք պ ե տ ք ե ք ս ա ն ա ն գ ա մ ա վ ե լ ի , ք ա ն մ ի ն չ և ա յ ժ մ , հ ա ր մ ա ր վ ե ն ք բ ա ն վ ո ռ ա գ յ ու ղ ա ց ի ա կ ա ն յ եր ի տ ա ս ա ռ դ ու թ յ ա ն հ ո գ ե բ ա ն ա կ ա ն ա ու ա ն ձ ն ա հ ա տ կ ու թ յ ու ն ն եր ի ն » (ն ու լ յ ն տ ե ղ ու մ) :

Դրանից բացի՝ կուսակցության XI համագումարը վորոշում ե. « Ա մ բ ո ղ ջ յ եր ի տ ա ս ա ռ դ ու թ յ ու ն ը , մ ի ն չ և 20 տ ա ր ե կ ա ն , բ ա ց ի կ ա ր մ ի ր բ ա ն ա կ ա յ ի ն ն եր ի ց , մ ա ն ու մ ե կ ու ս ա կ ց ու թ յ ա ն մ ե ջ Ռ Կ Յ եր Մ ի ու թ յ ա ն մ ի շ յ ց ո վ մ ի ա յ ն » (ն ու լ յ ն տ ե ղ ու մ) :

Քրոնյա յեկ սարիճ : Կ ու ս ա կ ց ու թ յ ա ն X I հ ա մ ա գ ու ս մ ա ռ ի ց հ ե տ ո , գ ը ե թ ե ա ո ա ջ ի ն ո Ր եր ի ն պ ր ը ֆ մ ի ու թ յ ու ն ն եր ի և տ ն տ ե ս ա կ ա ն ո Ր գ ա ն ն եր ի՝ բ ա ն վ ո ռ յ եր ի տ ա ս ա ռ դ ու թ յ ա ն դ ը ու թ յ ա ն բ ա ր ե լ ա վ մ ա ն ը ն վ ի ը վ ա ծ ա շ խ ա տ ա ն ք ը ու ժ ե ղ ա ց ա վ : Կ ա ր հ ի մ ն ա կ ա ն յ եր կ ու հ ա ն գ ու լ յ ց , վ ո ռ ո ն ց չ լ ու ծ վ ե լ ու դ ե պ ք ու մ մ ի ու թ յ ա ն ա մ բ ո ղ ջ ա շ խ ա տ ա ն ք ը դ ը վ ու մ ե ր փ ա կ ու ղ ու մ ե ջ . դ ը ա ն ք ե յ ի ն՝ բ ը ո ն յ ա ն (բ ը ո ն յ ա — ա յ ս ի ն ք ն ս ա հ մ ա ն ե լ ա յ ն թ ի վ ը , թ ե բ ա ն վ ո ռ յ եր ի տ ա ս ա ռ դ ու թ յ ա ն վ ո ռ մ ի ն ի մ ա լ 0 / 0 - ը պ ի տ ի ա շ խ ա տ ի ա ռ տ ա դ ը ու թ յ ա ն մ ե ջ) և տ ա ը ի ֆ ը : Հ ա մ ա ու ու ս ա կ ա ն Կ ե ն ս . Գ ո ռ ծ . Կ ո մ ի տ ե յ ի վ ո ռ ո շ ու մ ն ու հ ե տ ա գ ա կ ա մ ա յ ա ն ի ա ն բ ը ո ն յ ա յ ի մ ա ս ի ն , Հ ա մ ա ո . Կ ե ն ս . Ա ը հ ե ս տ . Մ ի ու թ յ ու ն ն եր ի Խ ո Ր հ ը դ ի վ ո ռ ո շ ու մ ն եր ը վ ճ ա ռ մ ա ն և ա յ լ ն ի մ ա ս ի ն ս կ ի զ ք դ ը ի ն ա յ ն հ ե ղ ա շ ը ջ մ ա ն , վ ո ռ ը յ եր ի տ ա ս ա ռ դ ու թ յ ու ն ը դ ը ա վ մ ի ա ն դ ա մ ա յ ն ա յ լ պ ա յ մ ա ն ն եր ի մ ե ջ :

Նոր վարքագիծ : Ն ո Ր վ ա ը ք ա գ ի ծ , կ ա մ ա յ ն , ի ն չ վ ո ռ ա ն վ ա ն ու մ ե ն հ ա ր մ ա ը ե ց ու մ յ եր ի տ ա ս ա ռ դ ու թ յ ա ն հ ո գ ե բ ա ն ու թ յ ա ն ը , ա յ ժ մ ե մ ի ա յ ն յ ու ը ա ց վ ու մ և կ ի ը ա ո վ ու մ : Ա ո ջ ե ի ց գ ն ու մ ե Մ ո ս կ վ ա ն : 1922 թ վ ա կ ա ն ի մ ա յ ի ս ի 15-ի հ ա մ ա ու ու ս ա կ ա ն կ ո ն ֆ եր ե ն ց ի ա ն մ ի ք ա ն ի յ ե ղ ը ա կ ա ց ու թ յ ու ն ա ը ա վ : Տ ն տ ե ս ա կ ա ն ա շ խ ա տ ա ն ք ի ն ո Ր ձ և եր ը , ն ը ա մ ա ս ս ա յ ա կ ա ն լ ի ն ե լ ը , ա շ խ ա տ ա ն ք ն ու պ ա յ ք ա ը ը , կ ու ը ս ը պ ա տ ա ն ի բ ա ն վ ո ռ ի ն կ ա տ մ ա մ ը , կ ու լ տ ու ը ա կ ա ն և ք ա ղ ա ք ա կ ա ն ա շ խ ա տ ա ն ք ն եր ի ճ ի շ տ մ ի ա ց ու մ ը — ս ը ա ն ք ե ն կ ո ն ֆ եր ե ն ց ի ա յ ի հ ի մ

նական վորոշումները: Հետևանքը. «Արտադրութեան մեջ բանվոր յերիտասարդութեան ուժեղ դիմացկունութիւնը բարելավեց միութեան աշխատանքների պայմանները Այս հանգամանքը, ինչպես և կրթական աշխատանքի նոր մեթոդների կիրառումը վնչ միայն այս ամառը պահպանեցին մեր կազմակերպութիւնները, վորոնք անցած տարիներում ամառվա ամիսներին սովորաբար թուլանում էին, այլ շատ տեղերում, վերջին ձմեռվա հետ համեմատած, նույնիսկ ամրապնդեցին» (Կենտկոմի նամակը համառուսական 5-րդ համագումարին): Բավական է աչքի անցկացնել «Ю. Կ.»-ի 5 համար՝ սկսած 6—7-ից, վորպեսզի նկատենք միութեան վորակական աճումը: Վերջին (15—16) համարում խմբագրութիւնը գրում է. «Անցյալ տարվա ընթացքում մեր միութիւնը յեղել է բանվորա-գյուղացիական յերիտասարդական մասսայի իսկական առաջնորդն ու ղեկավարը: Այս բանն ապացուցեցին Մոսկվայի կազմակերպութեան հնգամյա հոբելյանի անթիվ ցույցերն ու սեպտեմբերի 3-ի հսկայական թափորները (վերջինը հաջողվեց առանձնապես Մոսկվայում): Այժմ 5-րդ համագումարի առաջ դրված է մի հսկայական խնդիր՝ ինքնապաշտպանութիւնից անցնել հարձակման:

այնացում յեկ խորացում:

Աշխատանքի ծավալման պրոցեսը լայնանում և խորանում էր: Միութեան ամբողջ աշխատանքի մեջ ուրույն տեղ է բռնում բանվոր յերիտասարդութեան կրթութիւնը: Յերկու տարվա ընթացքում միայն գործարանային դպրոցներում սովորողների թիվն աճեց մինչև 50000-ի: Ըստ վորակի շարունակ բարելավումն է կատարվում դպրոցներում և նրանց ձևավորման մեջ: Այս տեսակետից բավական արժեքավոր էր անչափահաս բանվորների կրթութեան նվիրած համառուսական առաջին համագումարը: Առաջին անգամ այստեղ մշակվեցին դպրոցական աշխատանքների մեթոդական ցուցմունքները, ինչ վոր

հսկայական նշանակութիւն ունի բանվոր յերիտասարդութեան դաստիարակութեան գործը ուղիղ դնելու համար: Պետք է հիշել նաև Մոսկվայի կազմակերպութեան արած ծառայութիւնները յերիտասարդական շարժման հանդեպ, ինչպես, որինակ, Բանվ. Յերիտ. Կոմ. Դաստիարակութեան Կենտրոնական Տան (ԲՅԵԿԿԿՏ) հիմնումը, վորը առաջինն է Ռուսաստանում: Առաջին անգամ այս տանն է կիրառվում դաստիարակութեան ամբողջական սիստեմը, վորովհետև բացի գործարանային դպրոցներից, այստեղ գործում են նաև գործարանային դպրոցների պահանջներին հարմարեցրած յոթնամյակը և գործարանային դպրոցների հրահանգիչների ինստիտուտը:

5-րդ համագումար:

Միութեան համառուսական 5-րդ համագումարը աշխատանքի միջանի փորձեր ցուցադրեց նոր պայմանների համար և մատնանշեց հետագա բայերը դաշնակցային շինարարութեան բոլոր շրջաններում: Համագումարի հիմնական խնդիրն ընկ. Բուխարինի գեկուցումն էր կոմմունիստական դաստիարակութեան մասին: Ընդունված բանաձևում, վորպես գլխավոր խնդիրներ, առաջադրվում են՝ կոմմունիստական կրթութիւն, մասնագիտական գիտութիւնների ձեռք բերումն Հանրապետութեան համար հարկավոր բոլոր ձյուղերում, գործնական դաստիարակութիւն ամենորյա պայքարում և մասնակցութիւն հասարակական կյանքին: Վորպես մանրամասնութիւն այս կետի, առաջադրվում է՝ գիտութեան խանդավառութիւն, արհեստների մասնագիտացում և ընտրութիւն, յերիտասարդութեան զգացմունքների ոգտագործում, հեղափոխական ոռոմանտիկա, յերիտասարդութեան պլորբտարական բարոյականութեան կրթութիւն և ֆիզիկական զարգացում:

Մնացած հարցերը (բանվ. յերիտասարդութեան կրթութիւն, աշխատանքը գյուղում և այլն) տալիս էին գլխավորապես գործնական ցուցմունքներ, ըստ վորում համարյա բոլոր հարցերն էլ քննվում էին նորից նոր վարքագծի տեսակետից:

Նախորդ համագումարներից և վոչ մեկում չկար այնպիսի համերաշխութուն ու միաբանութուն, ինչպես 5-րդում: Բոլոր շեղումները, վոր այսպես թե այնպես յերևան եյին գալիս առաջներում, արգեն միանգամայն վոչնչացված են: Կոմյերիտմիութունը վերջնականապես ձևավորվեց, վորպես կոմ. յերիտ. մասսայական կազմակերպութուն, վորն աշխատում ե Ռուսաստանի Կոմմունիստական Կուսակցության հետ համերաշխ և նրա անմիջական հսկողության ներքո:

Ռուսկոմյերիտմիության 5-րդ համագումարը վերջըրեց Հանրապետության Կարմիր նավատորմի շեֆությունը: Խաղաղ աշխատանքի ամբողջ ընթացքում կոմյերիտմիությունը չեր դադարում իրար յեռևից խմբեր ուղարկել հրամանատարական դասընթացները: 22 թվի ամառը միությունը նորից միջանի հազար անգամ, գլխավորապես աշխատող բանվորներից, տվեց նավատորմին: Այսպիսով կոմյերիտմիությունը մինչև նավատորմի շեֆությունն ընդունելը սերտորեն կապվեց նրա հետ:

Միւսրյան աճուսը:

Համառուսական 5-րդ համագումարից հետո նկատվում ե բոլոր կազմակերպությունների աճում: Ահա միջանի որինակ.

1) 22 թվի ոգոստոսից մինչև հոկտեմբեր Դոնբասի անդամների թիվը 6,000-ից հասավ 12,000-ի, այսինքն աճեց մոտ 100%:

2) Իվանովո-Վոզնեսենսկն այդ ժամանակամիջոցում -2,153-ից մինչև 2,834, այսինքն 31,20%, 3) Տվերը -2,837-ից մինչև 3,356, այսինքն 13,30%, 4) Սարատովը -4,221-ից մինչև 4,881, այսինքն 18%, 5) Յարոսլավը - ոգոստոսից մինչև նոյեմբեր 1,178-ից մինչև 2,040, այսինքն 78,10%, 6) Վորոնեժն այդ ժամանակամիջոցում -2,862-ից մինչև 3,919, այսինքն 29,90%: Վոլոգդայի կազմակերպությունն աճեց 5 անգամ:

«Միության արագընթաց աճումը կատարվեց ամենից առաջ Խորհրդային Իշխանության քաղաքական կայունությամբ, գյուղական տնտեսության ամրապըն-

դումով, սովի վերացման, արտադրությանց մեջ աշխատող բանվոր յերիտասարդության տնտեսական զրության բարելավման ու միության տնտեսական աշխատանքի ընդլայնման, ինչպես նաև հեղափոխական տարիների ընթացքում մեծացած յերիտասարդության քաղաքական ակտիվության շնորհիվ» (Կենտ, Կոմի Գամակը միության աճման մասին):

Ռուսկոմյերիտմիություն ցնվ Գերիակով Իճեերեցիոսցալ:

Վերջում պետք ե կանգ առնել միշազային յերիտասարդական շարժման մեջ Ռուսաստանի միության ունեցած դերի վրա:

Այստեղ մենք տեսնում ենք 3 ետապ. մինչև առաջին կոնգրեսսը, առաջինից մինչև յերկրորդ կոնգրեսսը և յերկրորդից հետո:

«Առաջին համագումարում այս հարցը (միշազային յերիտ. շարժման մասին) բացառապես ինֆորմացիոն բնույթ եր կրում, այն ժամանակ, յերբ Ռուսաստանի մեր միությունները միշազային շարժման մասին ունեյին թյուր գաղափար: Առաջին համագումարը վորոշում կայացրեց Արևմտյան Յեվրոպայի յերիտ. սոցիալիստական կազմակերպությունների հետ սերտ կապ հաստատելու անհրաժեշտության մասին: 1919 թվին Ռուսկոմյերիտմիությունը մեծ թափով սկսում ե ինֆորմացիա ժողովել միշազային յերիտասարդական շարժման մասին. նույն թվի յերկրորդ կեսին առաջին անգամ մասնակցում ե Բերլինի միշազային յերիտասարդական կոնգրեսսում (1919 թվի նոյեմբեր), վորով և փաստորեն դառնում ե Յերիտասարդական Ինտերնացիոնալի մի մասը» (ՌիՅերմ. պատմության թեզիսները):

Արդեն Կոմյերինտ-ի Բերլինի առաջին կոնգրեսսում Ռուսաստանի պատգամավորի ազդեցությունը չափազանց զգալի յեր: Արևմտյան կազմակերպությունները տեղեկություններ ստացան Ռուսաստանի փորձի մասին: Համառուսական 3-րդ համագումարը հաստատում ե Ռուս-

կոմյերիտասարդութեան միացումը յերիտասարդական ինտերնացիոնալի հետ: 1920 թվին Արևելքում ծնվում է յերիտասարդական շարժում: «Այդ տեսակետից գլխավոր ծառայութիւնը պատկանում է Ռուսկոմյերիտմիութեան և, ամենից առաջ, նրա ծայրագավառային, Թուրքեստանի և Ադրբեջանի կազմակերպութիւններին: Միջազգային շարժման առաջնակարգ հարցերը 1921 թ. մայիսի համառուսական կոնֆերենցիայում քննվում էին վոչ վորպես ինֆորմացիոն, այլ գործնականի կողմից: Այդ կոնֆերենցիան հավանութիւն տվավ Կենտ. կոմի վորոշումներին, այն է՝ կոնգրեսսի հրավիրման տեղի և ինտերնացիոնալի Գործկոմը Մոսկվա տեղափոխելու մասին, ինչպես և ձևակերպեց ներկայիս յերիտասարդական շարժման հիմնական դերը և նրա փոխհարաբերութիւնը կուսակցութեան հետ քաղաքական բոլոր հարցերի նկատմամբ և այլն»:

«Յերիտասարդական ինտերնացիոնալի յերկրորդ կոնգրեսսում կարելի յեր նկատել Ռկոմյերիտմիութեան դերի հսկայական մեծութիւնը... Բոլոր վորոշումներում անց է կացված Ռկոմյերիտմիութեան սկզբունքային գիծը, վորն ամեն կերպ պաշտպանվում եր բոլոր դիսկուսիաներում»... «Գործկոմի Մոսկվա տեղափոխումը մեծացրավ Ռկոմյերիտմիութեան դերը»: Յերկրորդ կոնգրեսսից հետո Ռուսաստանի կազմակերպութիւնը դեկավարի դեր է կատարում միջազգային յերիտասարդական շարժման մեջ:

Քաղաքացիական կռիւ ժամանակ Ռուսաստանի միութիւնը մասսայական մի կազմակերպութիւն եր, վորն իր բնույթով ու կազմով ցայտուն կերպով տարբերվում եր Արևմուտքի մյուս կազմակերպութիւններից:

Վերջինները կատարում էին կոմմունիստական կուսակցութիւնների դերը. սրանք դեռ թույլ էին և նոր էին կազմակերպվում: Յերկրորդ համագումարից և, գլխավորապես, 3-րդից հետո, վորը տեղի ունեցավ 22 թվի վերջը, արևմտյան կազմակերպութիւններն

ըստ տիպի բավական մոտեցան ռուսականին: Սրանով հեշտանում է Ռուսաստանի միութեան փորձից ոգավիւր բոլոր բնագավառներում:

(Բոլոր քաղվածքները վերցված են Ռուսկոմյերիտմիութեան 4-րդ համագումարում ընկ. Լ. Շացկինի կարգացած զեկուցումից. տես համագումարի № 2 բյուլլետենը):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 4-ՐԴ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՇՈՇԱՓԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. „XI с'езд РКП (б) о молодежи“.—Изд. ЦК РКСМ, 1922 г.
2. XI с'езд РКП (б). Стенографический отчет. Гиз, 1922 г.
3. „К новой работе“ (всероссийская конференция РКСМ). Изд. ЦК РКСМ, 1922 г.
4. „Материалы по экономической работе РКСМ“. Изд. ЦК РКСМ, 1922 г.
5. „К V с'езду РКСМ“. Изд. ЦК РКСМ, 1922 г.
6. „Первый камень“. Изд. ЦК РКСМ, 1922 г.
7. „Республика молодежи“. Изд. МК РКСМ, 1922 г.
8. Бюллетени V-го с'езда РКСМ.
9. Бюллетень № 2 IV с'езда РКСМ, Доклад т. Шацкина.
10. Комплект журнала „Юный Коммунист“ за 1922 г.
11. „Решения пятого всероссийского с'езда РКСМ“. Изд. „Молодая Гвардия“, Москва, 1922 г.

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Ե.

ՏԵՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Կոնսպեկտը կազմվում է յուրաքանչյուր նահ. կոմիտեյում:

Կոնսպեկտ կազմելիս պետք է ղեկավարվել հետևյալով.

1. Կոնսպեկտի ծրագիրը. 1) Յերիտասարդության մասնակցությունը նահ. հեղափոխական շարժումներին, 2) Յերիտաս. կազմակերպությունները և մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը գոյություն ունեցող խմբակները, 3) Յերիտասարդությունը Հոկտեմբերյան որերին, 4) Ռուսկոմյերիտ. միություն ծագումը 5) Միությունը քաղաքացիական կռիվում (ճակատում և այլն), 6) Գաղտնի աշխատանք, 7) Պայքար մյուս յերիտ. կազմակերպությունների դեմ, 8) Կուսակցությունն ու Ռուսկոմյերիտմիությունը, 9) Միության աճումը, 10) Կազմակերպության դրությունը:

2. Անհրաժեշտ է գլխավորապես կոնկրետ փաստերով և թվական տվյալներով լուսաբանել այն, թե համառուսական շարժումն ինչպես երբեկվում տեղական մասշտաբով: Առանձնապես կարևոր է թվերով տալ շարժման նկարագիրը:

3. Անհրաժեշտ է կոնսպեկտում հիշատակել շարժման ակնավոր մասնակիցներին, ինչպես կենդանի մնացածներին, այնպես և, գլխավորապես, ճակատներում ընկածներին:

4. Պետք է հրապուրվել, ինչպես լինում է սովորաբար, համագումարները և նրանց աշխատանքների

մանրամասնությունները թվելով: Տեղական կազմակերպության պատմությունը պետք է լուսաբանի վնչ թե տարբեր ճյուղերի զարգացումը, այլ տվյալ նահանգի կազմակերպության ընդհանուր աճումը և գլխավորապես նրանց մասնակցությունը ընդհանուր հեղափոխական զարգացման մեջ:

Կոնսպեկտ զեկուցողն ու կազմողը պետք է նախապատրաստական այսպիսի աշխատանք կատարեն.

- 1) Աչքի անց կացնել կուսակցություն պատմության ամբողջ գրականությունն ու նյութերը. 2) Հարցաքննել հին կուսակցականներին, հեղափոխական շարժման մեջ յերիտասարդ որերին ինչ մասնակցություն են ունեցել իրենք և ինչ մասնակցություն է ունեցել ամբողջ յերիտասարդությունը նրանց հիշողությամբ: 3) Այդ նպատակով նայել հին կուսակցականների անկետաները, վոր նրանք զտման ժամանակ ներկայացրել են տեղական հանձնաժողովներին. 4) Հավաքել արխիվային գնահատելի նյութեր (առաջին արձանագրությունները, դիմումներ և կոչեր, լրագրական քաղվածքներ, պուլսմիկա մյուս կազմակերպությունների հետ, գորակոչի յենթարկվածներից ցուցակները և այլն). 5) Միության ծեր անդամներից տեղեկություններ հավաքելով վերականգնել միությունային շարժման հետաքրքիր դեպքերը (գաղտնի աշխատանքներից և այլն), 6) Հավաքել ստատիստիկական տվյալներ միություն շարժման մասին. 7) Հավաքել կենսագրական նյութեր տեղական յերիտասարդական շարժման ռահվիրաների մասին. 8) Տվյալներ հավաքել, թե միություն տեղական կազմակերպությունը քանի անդամ է տվել կուսակցությանը:

Տեղական շարժմանը վերաբերող վերջին դասախոսությունների նախապատրաստական աշխատանքի համար պետք է անպայման կանչել նահապարհակուսակցությունների յերիտասարդական սեկցիայի բոլոր մասնակիցներին: Կուսակցության և յերիտասարդական պատմությունների նյութը նայելը, «ծերերի» հարց ու փորձը և այլն

ամբողջովին պետք է դրվի կուրսանտները վրա: Նահ-
կոմի ներկայացուցչի գործը պիտի լինի ղեկավարել
նրանց աշխատանքները միայն:

ՀԱՎԵԼՎԱԾ

Գումբրիսօւրձու իր
Հայաստանում:

Մարքսիստական բնույթ կրող յերիտա-
սարդական առաջին կազմակերպութիւնը
Հայաստանում հիմնվում է 1916 թ. աշնան Եջմիածնում,
իսկ 17 թ. Յերևանում: Դրանք մարքսիզմ ուսումնասի-
րող աշակերտական և ուսանողական փոքր խմբակներ
էին:

1918 թ. Յերևանի կազմակերպութիւնը զգալիորեն
մեծացել էր. անդամների թիվը հասնում էր 30—35 հոգու.
նման կազմակերպութիւն ստեղծվում է Ալեքսպոլում և
Հայաստանի այլ վայրերում: 18 թ. վերջերին նա այն-
քան է ուժեղանում, վոր կարողանում է մեծ նվաճում-
ներ անել նաև բանվորների շրջանում:

1919 թ. նոր կազմակերպութիւններ են ստեղծվում
Ղամարլվում, Ոչականում, Զանգեզուրում, Դիլիջանում
և այլ վայրերում: Նույն թվականին ստեղծվում է այդ
կազմակերպութիւնները ողակող կենտրոնը Յերևանում:

Միութիւնը կոչվում էր «Սպարտակյան» և գերա-
զանցապես քաղաքական հողի վրա յեր դրված: Նա
նպատակ էր դրել իրեն դասակարգայնորեն կրթել և
հասունացնել Հայաստանի բանվորա-գյուղացիական
յերիտասարդութիւնը և պատրաստել նրան հեղափոխա-
կան աշխատանքների համար: Չնայած դաշնակցական-
ների հալածանքներին, 1919 թ. մայիսի 1-ին լույս է
տեսնում միութիւնի որդան «Սպարտակ»-ի առաջին հա-
մարը: Յերկրորդ համարի լույս ընծայելուց հետո գաղտ-
նիքը բացվում է և թերթը խափանվում:

1920 թ. սկզբներին Կոմմ. կուսակցութիւնը ղեկա-

վարութիւնը և Բագվից յեկած ընկերների ոժանդա-
կութիւնը միութիւնը հսկայական աշխատանքներ է
կատարում բանվորների և զինվորների շրջանում: 1920 թ.
մայիսին միութիւնը այնքան էր ուժեղացել, վոր պատ-
րաստվեց մայր կուսակցութիւն հետ դուրս գալ բաց
պայքարի իր դասակարգային հակառակորդների դեմ:

Ապստամբութիւնը պարտութիւնից հետո միութիւնը
սկսում է թուլանալ, ուժերը ցրիվ են գալիս, բայց այդ
բոլորը կրում է ժամանակավոր բնույթ: 7 ամսից հետո
տեղի յե ունենում Հայաստանի բանվորա-գյուղացիական
հեղափոխութիւնը:

Խորհրդայնացումից հետո սկսվում է ուժեղ թափով
աշխատանք թե Յերևանում և թե մյուս գավառներում:
21 թ. հունվարին Յերևանի կազմակերպութիւնը քաղա-
քային անդամների թիվը հասնում էր 200-ի, Եջմիածնի
կազմ. մոտ 100-ի: Զեռնարկել էին գյուղերում ևս
բշիջներ ստեղծելու: Հոսանքը դեպի միութիւնը տա-
րերային էր, բայց պատրաստի ղեկավարների սակա-
վութիւնը հնարավորութիւն չէր տալիս մեծացող կազ-
մակերպութիւն կարիքները լիովին բավարարելու: Միութ-
իւնը հին կորիզը թույլ էր, անկարող նորեկներին իր
մեջ մարսելու, և այդ հանգամանքը հետագայում շատ
վատ է անդրադառնում կազմակերպութիւնի վրա:

Փետրվարյան հակա-հեղափոխութիւնի ժամանակ
ընկերների մեծ մասը ձերբակալվում են: Մնացածը կու-
սակցութիւն և Խորհրդային իշխանութիւն կողմն անցած
զորքերի հետ Ֆրոնտ են կազմում ընդդեմ ավանտյու-
րիստների: Ղամարլուի Ֆրոնտում, միայն այդ շրջանից
մասնակցում էին 100 կոմսոմոլիստներ: 42 որ տևող
քաղաքացիական կռիվներին հազիվ մանկական հասակ
ապրած կազմակերպութիւնը հայտնաբերում է անորի-
նակ յեռանդուն մասնակցութիւն:

Քաղաքացիական կռիվները վերջանում են բանվոր-
ների և չքավոր գյուղացիների հաղթանակով: Ապրիլի
2-ից միութիւնը նորից հնարավորութիւն է ստանում

անարգել աշխատելու. յեռանդն ու վողկորությունը նորից ե համակում բուրբին: Վերակազմվում ե կենտկոմի ցրիվ յեկած կազմը, սակայն հներից շատերը չկային. նրանք պատանդ եյին վերցվել դաշնակնների կողմից, իսկ հետո Տաթևի քարաժայռերից ձորը թափվեցին:

Յերկու ամսվա աշխատանքներից հետո հունիսի 12-ին հրավիրվում ե կենտկոմի առաջին լայնացրած պլենումը: Պլենումը պարզում ե, վոր կազմակերպչական ասպարիզում հսկայական նվաճումներ եյին կատարվել. կազմակերպության անդամների թիվը հասել եր 6625 հոգու:

Ոգոստոսի 1-ից սկսվում են շրջանային և գավառային համագումարներ, իսկ 20-ին հրավիրվում ե համահայկական առաջին համագումարը. դա ամենախոշոր հաղթանակն եր Հայաստանի բանվորա-գյուղացիական յերիտասարդության: Առաջին համագումարը վերջնականորեն կազմակերպության հիմքն ե դնում ապագա աշխատանքների ուղիները:

Առաջին համագումարից 3 ամիս անց հրավիրվում ե նորընտիր կենտկոմի առաջին լայնացրած պլենումը: Տեղերի զեկուցումներից պարզվում ե, վոր միութենական ներքին աշխատանքները դաշտային աշխատանքների պատճառով զգալի թուլացել եյին, այն ինչ խորհրդչինարարական ասպարիզում միության ուժերով կատարվել եր անգնահատելի աշխատանք:

Նոյեմբերին տեղի յե ունենում Հայաստանի խորհուրդների առաջին ընտրությունը. Յերևանի գավառում խորհուրդների մեջն են անցնում 200-ից ավելի կոմսոմոլիստներ, իսկ ամբողջ Հայաստանում մոտ 1060 հոգի: Դեկտեմբերին կատարվում ե Կարմիր բանակի համար առաջին զորահավաքը. կոմսոմոլը սալխ ե լր շարքերի 1500 դասակարգայնորեն վորոշ շաղախ ստացող յերիտասարդներ, վորոնք Կարմիր բանակի հիմքն են դառնում: 1922 թ. հունվարին կատարվում ե միության առաջին գտումը:

Կազմակերպությունից դուրս են արվում 893 յերիտասարդներ, վորպես անհարազատ տարր: Մայիսի 10-ից ձեռնարկվում ե համահայկական II-րդ համագումարը: Մինչև II-րդ համագումարը հսկայական աշխատանքներ եյին կատարվել, անդամների թիվը հասել եր 7097-ի. անգրագետները պակասել եյին 1600 հոգով, բանվորների թիվը միության մեջ կրկնապատկվել եր. յերկաթուղու գծում ստեղծվել եր մի ուժեղ կազմակերպություն. անց եր կացվել 17 կամպանիա:

Յերկրորդ համագումարից մինչև մեր օրերը Միությունը քաղաքական-լուսավորական աշխատանքների շրջանում հսկայական գործ ե կատարել: Անգրագետները պակասել են 70% -ով: Միության անդամների քաղ-գրագիտության համար արված ե հնարավորության մագրումումը, գավառային կենտրոններում բացված են յեղել բաղ-գրագիտության դասընթացներ, շրջանումում աշխատանքները սիստեմատիկ կերպով տարվել են կիրակնօրյա դասընթացների միջոցով. բանվոր յերիտասարդության շահերի պաշտպանության խնդրում արվել ե մեծ աշխատանք. ապահովվել ե բրոնի (ծրոն) խընդիրը. Միության մեջ բանվորների թիվը այս անգամ ելի յե կրկնապատկվել. այժմ Միությունն ունի 6294 անդամներ և թեկնածուներ, վորոնցից 663 բանվոր, 918 անգրագետ:

Բացի իր ներքին անմիջական աշխատանքներից կոմյերիտմիությունը զեկավարել ե նաև Պատկոմական կազմակերպության քաղաքական-լուսավորական աշխատանքը:

Ահա այսպիսի անցյալ և ներկա ունեցող կոմյերիտմիության առաջ կանգնած են յերեք խոշոր խնդիրներ. առաջին՝ կազմակերպության ներսում բանվորական կորիզի անմիջական ուժեղացումը թե քանակով և թե վորակով, յերկրորդ՝ յեղած Միության մասսայի վորա-

կի բարձրացումը, վորպես նախապայման նրա դասակարգային գիտակցութեան, յերրորդ՝ անկուսակցական յերիտասարդութեան շրջանում ունեցած իր գաղափարական ազդեցութեան բարձրացումը:

Ց Ա Ն Կ

Առաջարան 2-րդ հրատարակութեան	:	3
Առաջարան 1-ին հրատարակութեան	4
Դասախոսութիւն Ա.—Յերիտասարդական մասնայական շարժման սկզբնավորութիւնը	6
Դասախոսութիւն Բ.—Յերիտասարդութիւն և քաղաքացիական կռիւ: Միութեան առաջին քայլերը	26
Դասախոսութիւն Գ.—Պատերազմից ղեկի խաղաղութիւն: Նոր ստեղծման քաղաքականութիւն և Ռկոմյերիտմիութիւն	43
Դասախոսութիւն Դ.—Միութիւնը նոր պայմաններում: Ռկոմյերիտմիութիւնը և Յերիտմիտերնացիոնալը	52
Դասախոսութիւն Ե.—Տեղական կազմակերպութիւններէ պատմութիւնը	60
Հավելւած.—Պոմյերիտշարժումը Հայաստանում	62



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Քաղաքական գրականության սերիա

1. Կ. Մարքս—Վարձու աշխատանք ու կապիտալ, թարգմ. Ստ. Շահումյանի (72 էջ)—լույս է տեսել 1921 թ., Յերևան. . . Գինը — ր. 15 կ.
2. Կ. Տոպոլով—Հարկավոր և արդյոք բանվորներին ու գյուղացիներին սեփական զորք և ինչպե՞ս համար, թարգմ. Նարգիսյանի (24 էջ), 1922 թ., Յերևան . . . » — ր. 10 կ.
3. Ա. Մյանսկյան — Մեր բաղաբաղանու թյունն ու հերթական խնդիրները (15 էջ), 1922 թ. Յերևան . . . » — ր. 5 կ.
4. Ն. Անիմ—Պարենհարկի մասին, թարգմ. Թ. Ա. (64 էջ)—1922 թ. Յերևան . . . » — ր. 15 կ.
5. Միս. Գորել—Բերքի սակավությունն և սովի պատճառները, թարգմ. Կ. Հ., 1922, Յերևան » — ր. 5 կ.
6. Կ. Մարքս յով Ֆ. Ենգելս—Կոմունիստական Մա-նիֆեստ, թարգմ. Պ. Մակինցյանի (79 էջ) 1922 թ., Յերևան . . . » — ր. 40 կ.
7. Կ. Ռադիկ—Հոկտեմբերյան հեղափոխությունը և նրա առաջը պատմության մեջ, թարգմ. Կ. Հ. (22 էջ), 1922 թ. Յերևան . . . » — ր. 5 կ.
8. Վ. Բրատյանսկի—Պայքար աշխարհի բարեր-ների համար, թարգմ. Կ. Հ. (12 էջ) 1922 թ. Յերևան . . . » — ր. 5 կ.
9. Ա. Մուսկոս—Սոցիալիստ-հեղափոխականները Անգրեյովիասում (29 էջ), 1922 թ., Յերևան » — ր. 15 կ.
- 10 Ա. Յիկուլենկո—Գրադարանագիտությունն այր-բեռնարան, թարգմ. Յե. Թադևոսյանի (42 էջ) 1922 թ. Յերևան . . . » — ր. 20 կ.
11. Բաղրամյանների առաջին համազումարը (72 էջ), 1923 թ. Յերևան . . . » — ր. — կ.
12. Կ. Ռադիկ—Վ. Ի. Լենին, թարգմ. Ս. Չ. (16 էջ) 1923 թ. Յերևան . . . » — ր. 10 կ.
13. Կովալենկո—Քաղաքական գրագիտությունն ձեռնարկ, թարգմ. Լ. Աբովյանի (Հ. Պետրասի խմբ. մար-մնի հավելումներով) . . . » — ր. 40 կ.
14. Ռուս. կոմ. Յերիտ. Միություն Պատմությունը — 30 կ.

ԳԻՆԸ 30 Կ.

Լույս տեսած գրքերը ծախվում են Պետհրատի գրախանութներում

Գինը տպագրված և Պետհրատի առաջին տպարանում (Վաղարշապատ)

